



Էդիկ Բաղդասարյան

Էդիկ Բաղդասարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՆԻՖԵՍՏ

(Ծրագրային Հայտարարություն՝ Առաջարկ)

ISBN : 978-1-927860-27-4

WWW.Edic-Baghdasarian.com

Էդիկ Բաղդասարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՆԻՖԵՍՏ

(Ծրագրային Հայտարարություն՝ Առաջարկ)

2014

Տորոնտո – Կանադա

ISBN: 978-1-927860-27-4

Էդիկ Բաղդասարյան (Էդ. Գերմանիկ)

Հայկական հարցի մանիֆեստ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ	5
ԱՐԵՒԵԼՅԱՆ ՀԱՐՅԸ	7
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՒ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ	13
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ	17
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	22
ԱՐԵՒԵԼՅԱՆ ՀԱՐՅԸ ԵՒ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՐՈՒԺԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	29
ԱՐԵՒԵԼՅԱՆ ՀԱՐՅԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ	30
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՆԵՐԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ	38
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ՝ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	40
Ա) ՀԱՅԱՍՏԱՆԱԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀՀ, ԱՀ)	42
Ա- ԺՈՂՈՎՈՒՐԴ	42
Բ- ՊԵՏՈՒԹՅՈՒՆ	44
Բ-1- ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	44
Բ-2- ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	49
Բ) ՀԱՅԱՍՏԱՆԻՅ ԱՆՋԱՏՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎՐԱ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐ	53
Գ) ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌ	55
ՎԵՐՉ	57

Ներածական

Իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատևեման, սոցիալական եւ ազգային ազատագրության, իր լավ ապագայի համար մաքառումների դաժան ուղի է անցել, օրհասական պահեր է ապրել հայ ժողովուրդը: Նա առանձնապես ծանր փորձության ենթարկվեց, մեծագույն ողբերգություն ապրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դժնդակ տարիներին:

Այդ սարսափելի դեպքը արդյունքն էր Հայաստանի հերթական ու հետզհետե քաղաքական թուլացման, զանազան արտաքին արշավանքների, հայրենալքման, ներքին ու արտաքին հասարակական-քաղաքական ու հասարակական-տնտեսական մրցակցության, ներքին անհամաձայնությունների եւ ամենագլխավորը՝ Արեւելք-Արեւմուտք քաղաքական հակամարտության:

Իսկ ըստ հանրագիտարանների. «Արեւելքը՝ ավանդաբար ցույց է տալիս Եվրոպայի նկատմամբ դեպի արեւելք գտնվող աշխարհի մասը: Հիմնականում դա գործածվում է Ասիա աշխարհամասի վերաբերյալ: Իր հերթին, Արեւելք հասկացությունը բաժանվում է ըստ տարածաշրջանների՝ Հեռավոր Արեւելք, Մերձավոր Արեւելք եւ Միջին Արեւելք նշանակումների: Հայաստանն ըստ այդ բաժանումների, Միջին Արեւելքի երկիր է: Արեւելք հասկացությունը, բացի աշխարհագրական նշանակության, ունի նաեւ մշակույթ բնութագրող իմաստ»¹:

Սակայն Արեւելքյան տարծքներին հետզհետե ավելացել են հյուսիսային Աֆրիկայի որոշ երկրներ՝ Եգիպտոսը, Լիբիան եւ այլն:

Իսկ Արեւելքին հակադրվող Արեւմուտքը ավանդաբար եղել է Եվրոպան, եվրոպական գերուժ երկրները, որին ավելացավ նաեւ Հյուսիսային Ամերիկան Առաջին եւ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Վերջին տարիներին միջազգային քաղաքականության ամենաթեժ կետերից մեկը Մերձավոր Արեւելքն է, որը Զբիգնեւ Բժեզինսկին անվանել է «գլոբալ Բալկաններ»: Բուն «Մեծ Մերձավոր

¹ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան:

Արեւելք» ծրագիրը առաջ քաշվեց Ջեյմս Բեյքերի Հրապարակային քաղաքականության ինստիտուտի մասնակցությամբ: Այն նախատեսում է Մերձավոր եւ Միջին Արեւելքի հիմքի վրա աշխարհաքաղաքական նոր տարածաշրջանի ստեղծումը, որում ընդգրկվում են Կենտրոնական Ասիան, Հարավային Կովկասը, Մերձավոր Արեւելքի արաբական երկրները, Իսրայելը, Թուրքիան, Իրանը, Աֆղանստանը, Պակիստանը եւ Հյուսիսային Աֆրիկան: Ըստ այդ նախագծի, ԱՄՆ-ն Զինաստանից մինչեւ Բալկաններ ստեղծում է «ազատ մայրուղի», որտեղ չի կարող գոյություն ունենալ ԱՄՆ շահերին հակառակվող որեւէ երկիր ու վարչակարգ: Դա կլինի տարածաշրջան ԱՄՆ-ի համար, որը մեծ նշանակություն կունենա համաշխարհային տնտեսակարգի վրա ազդելու համար, այստեղ են շահագործվում նավթի ու գազի զգալի պաշարները, որից այսօր կախում ունի նաեւ ԱՄՆ-ի տնտեսությունը¹:

Արեւելք-Արեւմուտք հակամարտության արդյունքում առաջացել է «Արեւելյան Հարցը» որի անբաժան մասն է կազմում նաեւ «Հայկական Հարցը»: Հետագա էջերում փորձելու ենք ներկայացնել այդ երկու գլխավոր «Հարցերի» առավել հիմնավորված եւ պատմականորեն փաստված լուսաբանումները, վեր հանելով մինչ այս հնչած զանազան տեսակետներից կարեւորագույնները, դրանց պատմական ճանապարհը անցած ընթացքը, դրդապատճառները, նրանց հավակնող կողմերը, վերջիններիս հաջողված ձեռքբերումները, եւ ամենակարեւորը՝ այդ մրցակցական պայքարից՝ Արեւելյան Հարցից տուժած կողմերի՝ մասնավորապես Հայ ժողովրդի կրած կորուստները՝ հնագույն ժամանակներից մինչ մեր օրերը:

¹ - «Լուսանցք», թիվ 31, 2008թ

Արևելյան Հարցը

Հստ ավանդական պատմության կարծիքի ու համոզմունքի՝

«Արևելյան հարցը Եվրոպական դիվանագիտության մեջ հիմնախնդիրների ամբողջությունն էր՝ Օսմանյան կայսրության և նրա հպատակ ժողովուրդների ազատագրման, պատմական ճակատագրի, ինչպես նաև մեծ տերությունների գաղութային քաղաքականության վերաբերյալ:

Արևելյան հարցը հասկացությունն առաջին անգամ գործածել են Սրբազան դաշինքի (Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա, Ֆրանսիա և այլն) երկրները՝ 1822 թ-ի Վերոնայի կոնգրեսում՝ Թուրքիայի դեմ Հունաստանի մղած անկախության պատերազմի առիթով:

Արևելյան հարցի պատմությունն սկսվել է XVIII դարի վերջից և ավարտվել Առաջին համաշխարհային պատերազմով (1914–18 թթ.), երբ փլուզվեց Օսմանյան կայսրությունը: Աշխարհամարտը դարձել էր մեծ տերությունների շահերի բախման կիզակետ, իսկ Արևելյան հարցի հիմնախնդիրները՝ XVIII–XIX դարերի միջազգային հարաբերությունների գլխավոր առանցքը:

1877–78 թթ-ի ռուս-թուրքական պատերազմից հետո կնքված Սան Ստեֆանոյի, ապա՝ Բեռլինի պայմանագրերի (1878 թ.) փաստաթղթերում, միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ գործածվել է նաև «Հայկական հարց» հասկացությունը և դարձել Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունից անջատվել են առանձին ազգապատկան տարածքներ: Սևրի հաշտության պայմանագրով (1920 թ.) ճանաչվել է նաև անկախ և միացյալ Հայաստանի գոյությունը: Սակայն Թուրքիայում ծավալված ազգայնամոլական շարժումը, քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի մերձեցումը խոչընդոտել են Սևրի պայմանագրի իրագործումը: Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան մնացել են թուրքական տիրապետության տակ:

1922–23 թթ-ի Լոզանի կոնֆերանսում ճանաչվել են Թուրքիայի նոր սահմանները: Օսմանյան կայսրությունը դադարել է գոյություն ունենալուց,

և «Արևելյան հարց» հասկացությունը դուրս է եկել ասպարեզից: Արևելյան հարցը լուծվել է, սակայն Հայկական հարցը շարունակում է մնալ չլուծված»¹:

Նույն կերպով են բնութագրել «Արևելյան հարցը» նաև Հայկական Սովետական Հանրագիտարանը², Բրիտանիկա Հանրագիտարանը³, Հայկական Համառոտ Հանրագիտարանը⁴, Վիքիպեդիայի ազատ հանրագիտարանը⁵, ակադեմիկոս Գեորգ Ղարիբջանյանը⁶, եւ այլն :

Ռ. Սահակյանն ու Կ. Խուդավերդյանը այսպես են պատմել Արևելյան հարցի մասին.

«Արևելյան հարց, Օսմանյան կայսրության տիրույթների բաժանման համար մեծ տերությունների միջև ծավալված պայքարի և օսմանահպատակ ժողովուրդներ՝ այդ թվում հայ ժողովրդի, ազատագրական շարժման հետ կապված միջազգային հակասությունների պայմանական անվանումը դիվանագիտության և պատմական գրականության մեջ: «Արևելյան հարց» տերմինը առաջին անգամ գործածվել է **Սրբազան դաշինքի** (Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա, Ֆրանսիա և այլն) երկրների **Վերոնայի կոնգրեսում (1822)**՝ Թուրքիայի դեմ Հունաստանի մղած անկախության պատերազմի կապակցությամբ: **Լոզանի կոնֆերանսում (1922-23)** ստորագրված հաշտության պայմանագրով «Արևելյան հարց» հասկացությունը վերացել է:

Արևելյան հարցի պատմությունը պայմանականորեն բաժանվում է երեք փուլի: Առաջինն ընդգրկում է XVIII դ. 2-րդ կեսից մինչև **1853-56-ի Ղրիմի պատերազմն** ընկած շրջանը, երբ Արևելքում ուժեղացել է Ռուսաստանի ազդեցությունը, հաղթական պատերազմների հետևանքով Ռուսաստանին են անցել Ղրիմը, Բեսարաբիան, Կովկասի

¹ - Հայկական Հանրագիտարան՝

<http://www.encyclopedia.am/pages.php?bId=1&hId=984>

² - Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Երևան 1976, էջ 35:

³ - Britanica Encyclopedia, Vol. 7, USA 1970, pp. 869-876.

⁴ - Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ.1, Երևան 1990 էջ 361:

⁵ - http://hy.wikipedia.org/wiki/Արևելյան_հարց

⁶ - Գ. Ղարիբջանյան, «Արևելյան հարցի պատմությունից», Իրաննամե, համար 22-23, Երևան 1996-1997, էջ 3-6:

մի մասը: Ռուսաստանի այդ հաջողությունները հանդիպել են Ֆրանսիայի. Ավստրիայի և Անգլիայի դիմադրությանը:

Երկրորդ փուլն ընդգրկում է XIX դ. 2-րդ կեսը, երբ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման պատրվակով Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ձգտել են թուլացնել Ռուսաստանի դիրքերը Բալկաններում, Մերձ. Արևելքում և ընդլայնել իրենց ազդեցության ոլորտը Թուրքիայում: Դրան նպաստել է Ռուսաստանի պարտությունը Ղրիմի պատերազմում: Չնայած 1877-78-ի ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակին, եվրոպական տերությունները խոչընդոտել են նրան օգտվել այդ հաջողությունից: Պատերազմից հետո կնքված Սան Ստեֆանոյի պայմանագրի (1878), ապա Բեռլինի կոնգրեսի (1878) փաստաթղթերում, միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ, շոշափվել է Հայկական հարցը, որը Արևելյան հարցի բաղկացուցիչ մասն էր: Արևելյան հարցի երկրորդ փուլում վերելք է ապրել Օսմանյան կայսրության լծի տակ գտնվող ժողովուրդների՝ հայերի, հույների, բուլղարների, սերբերի և այլոց ազգային-ազատագրական շարժումը: Բեռլինի կոնգրեսից (որը չարդարացրեց հայ ժողովրդի հույսերը) հետո հայ հասարակական-քաղաքական շրջանակներում հասունացել է Արևմտյան Հայաստանը թուրքական լծից զենքով ազատագրելու գաղափարը:

Արևելյան հարցի երրորդ փուլն ընդգրկում է XIX դ. վերջից մինչև 1923-ը ընկած ժամանակաշրջանը: Ուժեղացել է Գերմանիայի ազդեցությունը Օսմանյան կայսրությունում, կնքվել է երկու երկրների դաշինք: Ընդլայնվել է հայերի, արաբների և այլոց ազգային-ազատագրական շարժումը, որը իբրև հարմար առիթ օգտագործել են մեծ տերությունները Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար: Նրանք առաջ են քաշել Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու ծրագրեր (տե՛ս «Մայիսյան բարենորոգումներ» 1895, Հայկական բարենորոգումներ 1912-14). Օգտվելով եվրոպական տերությունների միջև եղած հակասություններից՝ թուրքական կառավարող շրջանակները ոչ միայն չեն իրագործել նախատեսված բարեփոխումները, այլև ձեռնամուխ են եղել հայ ժողովրդի ոչնչացման ծրագրի իրականացմանը (Հայկական կոտորածներ 1894-96, Ադանայի կոտորած 1909, Մեծ եղեռն):

Առաջին աշխարհամարտում (1914-1918) Թուրքիայի պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունից անջատվել են ազգային շատ տարածքներ: 1920-ի Սևրի հաշտության պայմանագրով ճանաչվել է նաև անկախ և միացյալ Հայաստանի գոյությունը: Սակայն Թուրքիայում ծավալված ազգայնամոլական շարժումը (**Քեմալական շարժում**), քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի մերձեցումը խոչընդոտեցին Սևրի պայմանագրի իրականացմանը, Արմ. Հայաստանը և Կիլիկիան մնացին թուրքական տիրապետության տակ:

Լոզանի կոնֆերանսում ճանաչվեցին Թուրքիայի նոր սահմանները. Օսմանյան կայսրությունը դադարեց գոյություն ունենալ: Արևելյան հարցը ստացավ իր լուծումը, սակայն Հայկական հարցը դեռևս մնում է չլուծված»¹:



Օսմանյան կայսրությունը 1481 թ.

1 - «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996թ. էջ 57:

Իսկ Արեւելյան Հարցը Վերաբերում է Կարգույն Եւ Կենսւոյն

«Արեւելյան հարցը», եվրոպական պատմության մեջ, ներառում է դիվանագիտական եւ քաղաքական խնդիրները որոնք պայմանավորված են եղել Օսմանյան կայսրության անկումով . Արտահայտությունը չի տարածվում որեւէ կոնկրետ խնդրի, բայց փոխարենը իր մեջ ներառում է մի շարք բարձրացված հարցեր 18 - րդ 19 - րդ եւ 20 - րդ դարերի ընթացքում, այդ թվում անկայունությունը եվրոպական տարածքներում որտեղ իշխում էր Օսմանյան կայսրությունը:

Արեւելյան Հարցը սովորաբար թվագրվում է 1774 - ին, երբ ռուս - թուրքական պատերազմը (1768-1774), ավարտվել է օսմանցիների պարտությամբ: Քանի որ Օսմանյան կայսրության լուծարումը ենթադրվում է, որ մոտավորապես է, ուստի եվրոպական տերությունները զբաղվում էին պայքարել ու պաշտպանել իրենց ռազմական, ռազմավարական եւ առևտրային շահերը Օսմանյան տիրույթներում: Մի կողմից Ցարական Ռուսաստանը, մյուս կողմից, Ավստրո - Հունգարիան եւ Միացյալ Թագավորությունը աշխատում էին պահպանել իրենց լավագույն շահերը: Արեւելյան Հարցը հանգստի կոչվեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ փլուզվեց Օսմանյան կայսրությունը»¹:

Այսպիսով, հարկ է նկատել, որ թեեւ «Արեւելյան հարցի» մասին արտահայտված տվյալները այնպես են՝ ինչպես պատահել են նշված պատմական իրադարձությունները եւ ոչ մի խոսք նրանց ճշգրտության մասին, սակայն Արեւելյան հարցի ազդիսի բնութագրումը արտացոլում է հարցի միայն մի մասը եւ չի ներկայացնում նրա ամբողջությունը պատմության ողջ ընթացքում:

Մենք այն կարծիքի ենք որ «Արեւելյան հարց» ասելով հարկ է նկատի ունենալ Արեւելյան ժողովուրդների պահանջներն ու իրավունքները միջազգային քաղաքականության ոլորտում: «Արեւելյան հարցի» բովանդակությունը պայմանավորված է եղել, մի կողմից պատմական տվյալ ժամանակաշրջանում անկախության համար արեւելյան ժողովուրդների մղած պայքարի հասունության մակարդակով, մյուս կողմից, այն դերով, որ հատկացնում էին նրան մեծ

¹ - http://en.wikipedia.org/wiki/Eastern_Question

տերությունները՝ Արեւելքում գերիշխող դիրք գրավելու համար գործադրած իրենց դիվանագիտությամբ:

Իսկ արդյո՞ք արեւելյան ժողովուրդների ազատ ու անկախ ապրելու իրավունքն ու նրանց ձգտումներն ու պայքարը կարելի է բացատրել միայն 18-20-րդ դարերի վերոհիշյալ անցուդարձերով, արդյո՞ք պատմության ողջ ընթացքում Արեւմուտք-Արեւելք հակամարտությունը տեղի է ունեցել միան հիշված այդ ժամանակաշրջանում, արդյո՞ք այդ ժամանակաշրջանից առաջ չեն եղել Արեւելյան ժողովուրդներ, որոնք այդ հակամարտության կամ զոհն են դարձել, կամ էլ ոտքի են ելել ու պայքարել իրենց գոյության ու ազատ ապրելու համար: Արդյո՞ք միջազգային դիվանագիտությունը սկիզբ է առել 18-րդ դարում թե՞ ունի շատ վաղ անցյալ:

Անշուշտ եւ անկասկած չի կարելի Արեւելյան հարցը սահմանափակել 18-20-րդ դարերի մեջ միայն, այլ կարող ենք այն համարել Արեւելյան հարցի անբաժանելի մասերից մեկը, քանի որ այդ Հարցը շատ երկար պատմական ուղի է անցել եւ ցավոք դեռեւս շարունակում է իր երթը դեպի ապագա:

«Հայկական Հարցը» Արեւելյան հարցի անքակտելի մաս է կազմում:


Մեր կողմից բնութագրված «Արեւելյան հարցի» բովանդակության սահմաններում այն առաջացել է երկու ընդհանուր դասակարգումների շրջանակում.

- 1- Արեւելյան հարցի առաջացումը Արեւելյան խոշորագույն կամ փոքր տերությունների միջեւ տեղի ունեցած հակամարտությունների հետեւանքով, որոնք տեղի են ունեցել ծավալապաշտական ու ռազմական ու տնտեսական շահերի ձեռքբերման նպատակով: Այս դասակարկմանը կարելի է անվանել Արեւելյան ներքին հակամարտություններ:
- 2- Արեւելյան եւ Եվրոպական գերիշխող տերությունների հակամարտության հետեւանքով, որոնք տեղի են ունեցել Արեւելքում գերիշխող դիրք գրավելու համար: Այս դասակարկմանը կարելի է անվանել Արեւմտաարեւելյան հակամարտություններ:

Հայկական հարցի սկզբնավորումը եւ զարգացումը պատմության ընթացքում

Ինչպես արդեն նշել ենք «Արեւելյան հարց» ասելով հարկ է նկատի ունենալ Արեւելյան ժողովուրդների պահանջներն ու իրավունքները միջազգային քաղաքականության ոլորտում: «Արեւելյան հարցի» բովանդակությունը պայմանավորված է եղել, մի կողմից պատմական տվյալ ժամանակաշրջանում անկախության համար արեւելյան ժողովուրդների մղած պայքարի հասունության մակարդակով, մյուս կողմից, այն դերով, որ հատկացնում էին նրան մեծ տերությունները՝ Արեւելքում գերիշխող դիրք գրավելու համար գործադրած իրենց դիվանագիտությամբ: «Հայկական հարցը» լինելով «Արեւելյան հարցի» անբաժանելի մասը մի կողմից բացատրվում է իր կորցրած ազգային պետականության վերականգնումով, իսկ մյուս կողմից ազգային տարածքների միավորմամբ ու ամբողջականությամբ, իսկ հայ ժողովրդին յուրահատուկ սարսափելի իրադարձության՝ հայկական կոտորածների եւ գլխավորապես հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումով ու փոխհատուցմամբ:

Հայոց պատմության մեջ ամենախոշորագույն իրադարձությունը, որը ըստ մեզ՝ հիմք ծառայեց «Հայկական հարցի» սկզբնավորման համար, եղել է Հայաստանի առաջին բաժանումը Սասանյան Իրանի եւ Հռոմի կայսրության միջեւ: Ինչպես գիտենք դեռեւս Վարազդատի օրոք, 375-376 թթ. եւ ապա 383-384 թթ. պարսկահռոմեական դիվանագիտական շրջաններում սկսում է շոշափվել Հայաստանի խնդրի լուծման նոր ուղի՝ երկրի բաժանումը երկու պետությունների միջեւ: Նոր Կայսր՝ Թեոդոսը եւ Պարսից արքա Շապուհ Գ-ը համաձայնության են գալիս 387 թվականին:



Հայաստանը 387-428 թթ.

Էդիկ Բաղդասարյան (Էդ. Գերմանիկ)

Հայկական հարցի մանիֆեստ

Հայաստանը բաժանվում է երկու անհավասար մասերի՝ արեւմտյան գավառները՝ Կարին, Եկեղիք, Դերջան, Մանանդի, Դարանաղի, Խորձյան, Մզուր եւ այլ շրջաններ անցնում են Հռոմին, իսկ մնացած ամբողջ երկիրը՝ Մեծ Հայքի երեք քառորդը՝ Պարսկաստանին։ Արշակ Գ-ը տեղափոխվում է հռոմեական մասը եւ այնտեղ թագավորում եւս երկու տարի։ Պարսկական մասում նոր թագավոր է կարգվում Խոսրով Գ-ը՝ նույն Արշակունի տոհմից։ Արշակ Գ-ի մահվանից հետո հռոմեացիները նրան հաջորդող չեն նշանակում, այլ երկրամասը դարձնում են իրենց պետության նահանգներից մեկը, հռոմեական նահանգապետի կառավարման ներքո։

Այսպիսով Հայկական հարցի երեք տարրերից այսինքն Տարածքային ամբողջականություն, ազգային պետականություն եւ կոտորածներից երկուսը իրականություն է դառնում եւ Հայաստանը կորցնում է իր միասնական պետականությունը եւ տարածքային ամբողջականությունը, որը առաջանում է Արեւելք-Արեւմուտք հակամարտության արդյունքում, որը եւ մենք համարում նաեւ Արեւելյան հարցի ամենակարեւոր պատմական բաղադրիչներից մեկը։

428 թ. վերանում է Հայոց ազգային պետականությունը Արեւելյան Հայաստանում, որը հանդիսանում է Հայկական հարցի հաջորդ փուլը, Հայ ժողովուրդը կորցնում է ոչ թե միայն իր հայրենիքի տարածքային ամբողջականությունը, այլեւ Հայրանիքի մի հատվածի Արեւելյան Հայաստանի հայկական պետականությունը, այնինչ նրան պարտավորում է դարեր շարունակ մաքառել նրա վերականգնման համար։

Հայկական հարցը ավելի է խորանում հետագայում, երբ 591 թ. Պարսկաբյուզանդական հաշտության պայմանագրով տեղի է ունենում Հայաստանի երկրորդ բաժանումը։

Հայ ժողովրդի պայքարը Հայկական հարցի բաղադրիչ երկու տարրերի՝ տարածքային ամբողջականության ու ազգային պետականության վերականգնման ուղղությամբ իր դրական արդյունքն է ստանում 9-րդ դարի երկրորդ կեսում Բագրատունյաց թագավորության հիմնադրմամբ։ Սակայն երբ այդ պետականությունը վերանում է 1045 թ. Բյուզանդական-արաբական-թուրք-սելջուկական հակամարտության հետեւանքով, «Հայկական հարցը» կրկին օրվա առարկա է դառնում, որը, դարեր շարունակ լուծում չի ստանում մինչեւ 20-րդ դարի սկիզբը։ Թեեւ պատմական հայրենիքից դուրս 1080 թ. ստեղծվում է Կիլիկիայի հայկական իշխանությունն ու ապա թագավորությունը, սակայն նա չի լուծում Հայկական հարցը իր ամբողջական տարրերով։

Հայկական հարցը ավելի է խորանում 1424 թ. երբ Կիլիկիայի հայկական թագավորությունը վերանում է իսկ Մայր հողը՝ Հայաստանը 1555 թ. բաժանվում է այս անգամ Սեֆյան Պարսկաստանի եւ Օսմանյան Թուրքիայի միջեւ: 1555 թվականի մայիսի 26-ին կնքվել է Ամասիայի հաշտության պայմանագիրը, որով վերահաստատվել է 1514 թվականի (Չալդրանի ճակատամարտից հետո) Հայաստանի բաժանումը. Արևմտյան Հայաստանը, ներառյալ Բագրևանդն ու Վասպուրականը, մնացել է օսմանյան, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանի տիրապետության տակ: Թուրքիային են անցել նաև Արևմտյան Վրաստանը, արաբական Իրաքը՝ ներառյալ Բաղդադը, իսկ Պարսկաստանին՝ Արևելյան Վրաստանը և Այսրկովկասի արևելյան մասը: Կարսի շրջանը հայտարարվել է «չեզոք գոտի», իսկ բերդն ավերվել է:

1639 թվականին կնքված «Կասր ի Շիրինի» (Կասրե-Շիրին) պայմանագրով՝ մասնակի փոփոխություններով վերահաստատվել են 1555 թվականի Ամասիայի պայմանագրով նշված սահմանները: Հայաստանը կրկին վերաբաժանվել է 2 տերությունների միջև՝ հետևյալ սահմանագծով. Զավախքի լեռներից Ախուրյանի հոսանքով հասել է Արաքս գետ, թեքվել արևմուտք, ապա՝ Հայկական Պարի ջրբաժան գծով, Մասիսների գագաթներով ձգվել մինչև Վասպուրականի լեռները, Զագրոսի լեռնաշղթայով անցել Թուրք-պարսկական այժմյան սահմանագծով: Այս սահմանը գրեթե անփոփոխ է մնացել մինչև 1828 թ., երբ Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացել է Ռուսաստանին: Պայմանագրին հաջորդած 80-ամյա խաղաղության մեջ Արևելյան Հայաստանի տնտեսությունը որոշ աշխուժացում է ապրել, բայց Արևմտյան Հայաստանում շարունակվել է քայքայումը:

Հայ Ազատագրական Պայքարը Եվ Հայկական Հարցը

Հայ ժողովուրդը Առաջավոր Ասիայի քաղաքակրթության հնագույն կրողներից է, որի հարատեւումը նրա ազատագրական ոգու եւ պայքարի փայլուն առհավատչյան է: Դարեր շարունակ ազատագրական պայքարը եղել է նրա գոյատեւման անհրաժեշտ պայմանը եւ արտահայտություն գտել նրա կյանքի տարբեր ոլորտներում՝ հասարակա-կան-քաղաքական, մշակութային ու ռազմական:

Եւ իրոք, հայ ժողովուրդը ազատագրական պայքար է մղել, մահու եւ կենաց կռիւի ելել հռոմեական լեգեոնների (I դ. մ. թ. ա.), պարսիկների (V դ.), արաբների (VII—IX դդ.) դեմ: Նա վճռական դիմագրություն է ցույց տվել Բյուզանդական կայսրության հայահալած քաղաքականությանը, որի հետեւանքով XI դ. վերացվեցին Տարոնի, Տայքի, Վասպուրականի, Անիի, Կարսի հայկական թագավորությունները, նաեւ Բյուզանդիայի հակահայկական ընթացքով պիտի բացատրել սելջուկների արշավանքների հաջողությունը Փոքր Ասիայում եւ այնտեղ նրանց հաստատվելը: Այս շրջանում ուժեղացավ հայերի հոսքը դեպի Կիլիկիա, որտեղ 1080 թ. հիմնվեց Ռուբինյանների իշխանությունը: Ռուբինյան իշխանները, հմտորեն օգտագործելով թուրք-սելջուկների, խաչակիրների եւ Բյուզանդական կայսրության հակասությունները, կարողացան ընդարձակել իրենց տերիտորիան եւ ստեղծել Կիլիկիայի հայ- կական թագավորությունը: Արդեն XII դարի առաջին կեսին այդ թագավորությունը բավականաչափ ուժեղացավ եւ կեւոն II-ի ժամանակ հասավ իր հզորությանը:

Թաթար-մոնղոլական արշավանքները XIII դ. ահավոր ավերածության ենթարկեցին Հայաստանը: 1236 թ. վերջ տրվեց Զաքարյանների իշխանությանը: 1424 թ. նույն ճակատագրին արժանացավ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Եգիպտական մամլուկները Կիլիկիայի մայրաքաղաք Սիսը գրավելուց հետո, կործանեցին հայկական թագավորությունը: Թուրքերի նախորդները՝ Թուղրիլ ցեղապետի գլխավորությամբ Միջին Ասիայից Անատոլիա թափանցեցին XIII դ.: Թուղրիլի մահվանից հետո նրա որդին՝ Օսմանը 1299 թ. ստեղծեց իր պետությունը, որը նրա անունով էլ հետագայում կոչվեց Օսմանյան կայսրություն: Օսմանի հաջորդը՝ նրա որդի Օրխան, ստեղծելով

կազմակերպված բանակ, սրի ու հրի ուժով սկսեց ընդարձակել իր տիրակալությունը: Նա գրավված Բրուսան դարձրեց պետության մայրաքաղաք ու սկսեց հարձակումներ գործել արդեն իր հզորությունը կորցրած Բյուզանդիայի վրա: Սուլթան Մուրադի օրոք թուրքերը սկսեցին տարածվել Բալկաններում, իսկ նրա որդի Բայազիտն ավելի ընդլայնեց օսմանյան աշխարհակալությունը:

1387 թ. Հայաստանն ընկավ Լենկթեմուրի բռնապետության տակ: 1402 թ. Լենկթեմուրը Անկարայի մոտ Բայազիտին գերեվարեց, դա ժամանակավորապես հետաձգեց օսմանյան տիրակալության հետագա ընդարձակումը: Սակայն սուլթան Մահմուդը 1453 թ. մայիսի 29-ին գրավեց «Երկրորդ Հռոմը»՝ Կոստանդնուպոլիսը, եւ վերջ տվեց Բյուզանդական կայսրությանը:

Փոքր Ասիայում եւ Բալկաններում սուլթանի տիրակալության հաստատումը մեծագույն չարիք էր բազմաթիվ ենթակա ժողովուրդների համար: Անդրկովկասում, զգալի ավերածությունների պատճառ դարձան նաեւ աղկոյունլու եւ կարակոյունլու ցեղախմբերի հակամարտությունները, որոնք ավարտվեցին աղկոյունլու ցեղապետի՝ Ուզուն Հասանի հաղթանակով: Նրա իշխանության տակ ընկավ նաեւ Հայաստանը:

Սուլթան Սելիմը, սակայն, ետ խլեց Հայաստանը, 1517 թ. գրավեց Կիլիկիան, ապա Սիրիան ու Եգիպտոսը: Իսկ նրա որդին Սուլեյմանը, Օսմանյան կայսրության հզորությունը հասցրեց իր գագաթնակետին, նրա տիրակալության սահմանները ձգվում էին Լեհաստանից, Ուկրաինայից եւ Հյուսիսային Կովկասից մինչեւ Հնդկական օվկիանոս, Զագրոսի լեռներից մինչեւ Ատլանտյան օվկիանոս¹:

Վիեննան գրավելու եւ Եվրոպային տիրելու համար 1683 թ. նոր արշավանք ձեռնարկվեց: Դա վերջին փորձն էր: Ավստրիացիների, լեհերի եւ մյուս ժողովուրդների միասնական հարվածով Կարա Մուստաֆա փաշայի հզոր բանակը ջախջախվեց: Նրա դեմ լեհական բանակի շարքերում կռվում էին ոտ 5 հազար լեհաբնակ հայեր:

Ավելի քան երկուս ու կես դար տեւող (1473 — 1746) օսմանա-պարսկական պատերազմների ընթացքում Հայաստանն ահեղ մարտերի թատերաբեմ դարձավ: Երկիրն ամբողջությամբ ավերածության ենթարկվեց, բնակչության գերակշռող մասը ոչնչացվեց: Արտագաղթը

¹ - Մ.Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երեւան, 1976, էջ 21-22:

դարձավ կործանարար շարիք: Բնակչության հարկադիր տեղաշարժերից բացի, որ կատարեցին Շահ Աբբասը եւ ուրիշ տիրակալներ, բնակչության մի զգալի մասը, չտանելով անլուր հալածանքները, դիմում էր պանդխտության: Այս ամենի հետեւանքով Հայկական լեռնաշխարհը բնակեցվեց թուրք եւ այլ ցեղերով: Չնայած դրան, հայերը շարունակում էին մեծամասնություն կազմել: Եվրոպացի ճանապարհորդ Տավերնիեն, որ 1632 — 1668 թթ. ընթացքում վեց անգամ այցելեց Մերձավոր Արեւելք, գրում է, որ անցնելով Թուրքիայի մինչեւ Թավրիզ, նախկինում Հայկական նահանգ կոչվող այդ տարածության վրա, քաղաքներում ու գյուղերում մեկ մահմեդականի դիմաց հիստուն հայ էր հանդիպում¹:

Թուրքական պետությունը ի սկզբանե հպատակ այլադավան ազգություններին իրեն ձուլելու քաղաքականություն էր վարում: Պատմությանը հայտնի է, որ մի շարք սուլթաններ քրիստոնյաներին սրի քաշելու որոշում են ընդունել: Հենց այդ նպատակով էին ստեղծվում ենիչերիների գնդերը, որոնք կազմվում էին տուրքի դիմաց տարված եւ մահմեդականացված քրիստոնյա պատանդներից: Հավատափոխությանը նպաստում էր նաեւ գլխահարկը: Չափազանց ծանր ու գանձման եղանակներով դաժան այդ հարկը ստիպում էր ոմանց մահմեդականություն ընդունել, որպեսզի դրանով ազատվեն անընդհատ սաստկացող ճնշումներից ու ջարդերից:

Օսմանյան կայսրությունում նույնիսկ գույք ունենալու, մինչեւ անգամ կրոնական արարողություն կատարելու թույլտվությունը կախված էր սուլթանների գթությունից, որ ձեռք էր բերվում զանազան հնարամտությունների կամ էլ կաշառք տալու միջոցով: Քրիստոնյաների՝ «գլավուրների» խոսքը, երգումը որեւէ արժեք չունեին, նրանց վկայությունը հաշվի չէր առնվում: Դա նշանակում էր, որ Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաները մահմեդականների հանդեպ իրենց իրավունքները պաշտպանելու ոչ մի երաշխիք չունեին: Տիրողը կարող էր իրեն ենթակա քրիստոնյային նույնիսկ սպանել, բռնագրավել նրա ունեցվածքը եւ մնալ անպատիժ: Մի երկրում, որտեղ շարքային աստիճանավորից մինչեւ սուլթանը կաշառք էին վերցնում, որեւէ օրինականության մասին չէր կարող խոսք լինել: Եվ իսկապես, «անհուն կամայականությանց թագավորություն էր Օսմանյան կայսրությունը, ու մեծ վեզիրներն անգամ ապահով չէին, թե վաղը ո՞րչ պիտի մնային: Այդ

¹ Les six Voyages de Jean Baptiste Tavernier en Turquie et Perse et aux Indes, Paris, 1713, v. I, p. 48.

կացության մեջ ինչպես կարող էր ապահով ըլլալ ռայան, որուն նկատմամբ ոչ մեկ բռնություն, ոչ մեկ արդարություն արգելված չէր»¹:

Հայ ժողովուրդն այդպիսի ստորացուցիչ պայմաններում շարունակում էր փրկության ուղիներ որոնել, ձգտում էր ազատագրվել օսմանյան բարբարոսական լծից:

Ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը ժողովրդի ազատագրական պայքարն էր անկախության համար: Սակայն ի՞նչ միջոցներով: Կարող էր արդյոք հայ ժողովուրդը միայն սեփական ուժերով հասնել այդ նպատակին: Թուրքիայի ծանր լծի տակ գտնվող արաբ, հույն, հայ, քուրդ եւ Բալկանյան թերակղզում բնակվող բազմաթիվ այլ ժողովուրդների ազատագրության միակ իրական երաշխիքը միասնական պայքարն էր: Բայց ավատատիրական կտրտվածությունը, տնտեսական ու քաղաքական հետամնացությունը եւ ազգային ու կրոնական հակասությունները, ինչպես նաեւ եվրոպական տերությունների մեքենայությունները, արգելակում էին ճնշված ժողովուրդների միասնական ճակատի ստեղծումը:

Ելնելով ստեղծված դրությունից, հայ հասարակական-քաղաքական գործիչներից ոմանք այն կարծիքն էին հայտնում, թե հայ ժողովրդի ազատագրման համար անհրաժեշտ է դիմել եվրոպական տերությունների օգնությանն ու միջամտությանը, որովհետեւ սուլթանական բռնապետության ու ռազմական դիկտատուրայի պայմաններում ապստամբական փորձերը վերջանում են արյունալի շարժերով: Կարծիքների բախում էր տեղի ունենում նաեւ այն կապակցությամբ, թե Հայաստանի ազատագրման հովանավորը ո՞վ պետք է լինի, Արեւմտյան տերությունները, թե՞ Ռուսաստանը:

Հասկանալի էր, որ այս խնդրի արծարծման ընթացքում հաշվի էր առնվում մեծ տերություններից յուրաքանչյուրի շահագրգռվածությունը: Իսկ մեծ տերությունները, պարզ է, ելնում էին իրենց գաղութարարական ծրագրից եւ աշխատում օգտագործել ամեն մի առիթ, որպեսզի միջամտեն Թուրքիայի

¹ - Արշակ Ալբույաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961, էջ 823:

ներքին գործերին եւ Մերձավոր Արեւելքում հարմար դիրք գրավեն¹։

Հայ ազատաբաղձ գործիչներին հուսադրում էին միջին դարերում ծայր առած խաչակրաց արշավանքները եւ հատկապես 1645—1669 թթ. Կրետե կղում Իտալիայի (Վենետիկի հանրապետության) եւ Թուրքիայի միջ եւ ավելի քան քառորդ դար շարունակվող պատերազմները։ Վենետիկի հանրապետությունը, որ ժամանակի միջազգային առևտրի ասպարեզում կարելուր դեր էր խաղում, նպատակ էր դրել տիրել Միջերկրականի արեւելյան ափերին։ Դրանում շահագրգռվածություն էր հանդես բերում նաեւ Ֆրանսիան, իսկ Հոլմի պապը ձգտում էր պատերազմին նոր խաչակրաց արշավանքի տեսք տալ։

Այդ հանգամանքը Թուրքիայի բռնապետության տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին՝ հույներին, հայերին, ասորիներին, Բալկանների սլավոնական ժողովուրդներին ազատության նոր հույսեր էր ներշնչում։

¹ - Մ.Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երեւան, 1976, էջ 24։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թվականությունից առաջ

13 դ. մ.թ.ա - Ուրարտուի առաջին հիշատակությունը, Ուրուատրիե ձևով:
 13-11 դդ. մ.թ.ա - Նաիրի ցեղային միության գոյությունը:
 870-590 - Արարատյան (Ուրարտու) թագավորություն:
 570-560 - Երվանդ Սակավակյաց թագավոր:
 560-535 - Տիգրան Երվանդյան:
 522 դեկտ. 31, մայիսի 20, 21, 31 և հունիսի 12 - Հայերի
 ապստամբությունը Աքեմենյան Դարեհի դեմ:
 404-360 - Երվանդ, Հայաստանի կառավարիչ:
 360-337 - Կոդոմանոս, Հայաստանի կառավարիչ:
 330-300 - Երվանդ, Հայաստանի թագավոր:
 220-201 - Երվանդ վերջին, Հայաստանի թագավոր:
 189-160 - Արտաշես Ա. թագավոր, Արտաշիսյան թագավ. հիմնադրում:
 95-55 - Տիգրան Մեծ թագավոր:

Մեր թվականության

1 թ. - Արտաշիսյան թագավորության անկումը:
 2-62 - Օտար թագավորներ Հայաստանում:
 63-428 - Հայ Արշակունիների թագավորությունը:
 164 - Մեծ ապստամբություն Հայաստանում հռոմեական զավթիչների դեմ:
 311-312 - Հայ - հռոմեական ռազմական ընդհարումներ:
 364-367/8 - Վասակ Մամիկոնյանը գլխավորում է հայ ժողովրդի
 հերոսական պայքարը Սասանյանների ներխուժումների դեմ:
 428 - Հայ Արշակունիների հարստության վերացում: Հին հայկական
 պետության անկումը:
 428-484 - Մարզպանական Հայաստան:

- 451, մայիսի 26 (շաբաթ օր)- Հայ ժողովրդի մեծ ապստամբությունը Սասանյանների լծի դեմ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ (Ավարայրի ճակատամարտ):
- 481-484- Երկրորդ համաժողովրդական ապստամբությունը Սասանյանների դեմ՝ Սահակ Բագրատունու և Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ:
- 485-ից - Հայաստանը տանուտիրական երկիր:
- 492 - Հայերի ապստամբությունը Սասանյան Կավատի դեմ:
- 536 - Ապստամբություն Հայաստանում Բյուզանդական կայսրության դեմ:
- 571-572 - Հայ ժողովրդի ապստամբությունը Սասանյան Իրանի դեմ, Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) գլխավորությամբ:
- 595 - Բյուզանդական և պարսկական տիրապ. դեմ ապստ. Հայաստանում:
- 774-775 - Հայ ժող. մեծ ապստ. արաբների դեմ:
- 862 - Աշոտ Բագրատունին իշխանաց իշխան:
- 874/75 - Արաբ ոտիկանի վտարումը Հայաստանից:
- 884/85 - Հայոց պետականության վերականգնումը: Աշոտ Բագրատունին թագավոր հայոց:
- 886-1045 - Բագրատունիների (Հայոց կենտրոնական) թագավորությունը:
- 908-1021 - Վասպուրականի թագավորութ. առաջացումը (Գագիկ Արծրունի):
- 963-1065 - Կարսի թագավորությունը:
- 972-1113 - Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյան) թագավորությանը:
- 987-1170 - Սյունյաց թագավորությունը:
- 1080-1375 - Կիլիկիայի հայկական պետությունը:
- 1124, 1174 - Անիի բնակչության ապստամբ. օտար տիրողների դեմ:
- 12րդ դարի վերձևին-14րդ դարի կեսին - Զաքարյանների իշխանությունը Հայաստանում:
- 1249 և 1259-61 - Հայ-վրացական ապստ. մոնղոլների դեմ:
- 1376-1424 - Հայ իշխան Կոստանդինը կառավարում է Լեոնային Կիլիկիան:
- 1254-1427 - Մակուի (Արտազի) հայկական իշխանությունը:
- 1549 - Հայ ժողովրդի ազատության խնդրով Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը լինում է Հռոմում:
- 1555 - Հայաստանի բաժանումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև:
- 1562 - Հայաստանի ազատագրության համար գաղտնի ժողով է հրավիրվում Միքայել Սեբաստացի կաթողիկոսի կողմից:

- 1575-Թադեոս կաթողիկոսի ուղևորությունը Լվով, Վենետիկ, Հռոմ՝ Հայաստանի ազատագրության խնդրով:
- 1677 - Հակոբ Զուղայեցու գլխավորությամբ էջմիածնում հրավիրվում է գաղտնի ժողով Հայաստանի ազատագրության համար: Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա Հայաստանի ազատագրության խնդրով, 1701-ին՝ Մոսկվա:
- 1722-1730 - Ազատագրական կռիվներ՝ Սյունիքում, Դավիթ Բեկի և Մխիթար սպարապետի ղեկավարությամբ: Ազատագրական շարժում Արցախում:
- 1725-1727 - Թուրքական զորքերի ծանր պարտությունը Արցախում:
- 1727- Հալիձորի հերոսական ճակատամարտը թուրքերի դեմ: Հայ - պարսկական դաշինք թուրքական նվաճողների դեմ: Թահմազ շահը ճանաչում է Դավիթ Բեկի իշխանությունը Ղափանի երկրում:
- 1759- Հովսեփի էմինը գալիս է Հայաստան՝ ազատագրական պայքարը կազմակերպելու նպատակով:
- 1766, օգոստոսի 1- Սիմոն Երևանցի կաթողիկոսը կոնդակ է ուղարկում Եկատերինա II - ին՝ հայ ժողովրդին օգնելու խնդրանքով:
- 1769, հուլիսի 8- Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրման ծրագիրը ներկայացվում է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային:
- 1780, հունվար- Հ. Արղունյանի ու Հով. Լազարյանի բանակցությունները գեներալ Սովորովի և իշխան Պոտյոմկինի հետ, քննարկվում է Հայաստանի Ազատագրման հարցը:
- 1827, մայիսի 17- Հայկական կամավորական առաջին գումարտակը Թիֆլիսից մեկնում է մարտադաշտ:
- 1830-1838 - Հայազգի Գեներալ-մայոր Բ. Բեհրուլթովը հայկական մարզի վարչության պետ:
- 1832, դեկտ. 21- Թուրքական բանակը Սուլեյման փաշայի գլխավորությամբ արշավում է Զեյթունի վրա, սակայն լեռնականների կողմից ջարդվում է Զերմուկի դաշտում:
- 1833, փետր. 21 - Հայկական մարզի զինանշանի հաստատումը Նիկոլայ I - ի կողմից:
- 1841, դեկտ. 12 - Զեյթուն ներխուժող թուրքական զորքերը դուրս շարտվեցին լեռնագավառից:
- 1844, Նոյեմբեր - Թուրքիայում օտարերկրյա մասնագետներն առաջին անգամ մարդահամար են անցկացնում, ըստ որի արևմտահայերի թիվը կազմում էր 2,4 միլիոն մարդ:

- 1849, ապրիլի 27- Փարիզում սովորող արևմտահայ ուսանողները կազմում են ,Արարատյան ընկերությունը:
- 1862- Վանի զինված ելույթը թուրք. կառավարության դեմ:
- 1862, օգոստ. 2 - Զեյթունի հերոսական ապստամբությունը:
- 1863 - Մուշի զինված ելույթը քուրդ դերեբեյների դեմ:
- 1866, մայիսի 7- Կ.պոլսում հիմնադրվեց ֆրանկ մասոնական ,Սերե գաղտնի ընկերությունը:
- 1872, մարտի 3 - Վանում կազմակերպվեց «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպությունը:
- 1874, հունիսի 20- Մեծ Դարաքիլիսայում կազմակերպվեց ,Հայրենիք սիրող քրասենյակե կազմակերպությունը:
- 1875, հոկտեմբեր-Ապստամբ. բռնկվեց Զեյթունում:
- 1876- Կ. Պոլսում հիմնվեց Արարատյան և Արևելյան ընկերությունները:
- 1877- Ռուսական զորքերը հայազգի գեներալներ Տեր-Ղուկասովի, Լորիս-Մելիքովի և լազարեի ղեկավարությամբ գրավեցին Բայազետ քաղաքը, Արդահանը և Կարսը: Կարսում ջախջախվեցին Մուխտար փաշայի թուրքական բանակը:
- 1878, մարտի 8- Հայկական հարցը Եվրոպական պետություններին ներկայացնելու և ապա Բեռլինի կոնգրեսին մասնակցելու նպատակով Կ.Պոլսից Եվրոպա մեկնեց հայ պատվիրակությունը:
- 1878, օգոստոս-Սկսվեց Զեյթունի ապստամբությունը:
- 1878, հոկտ. 1- Վանում ստեղծվեց «Սև հաշ» գաղտնի կազմակերպությունը:
- 1879, ապրիլի 11- Կ. Պոլսում հիմնվեց Ազգանվեր հայուհյաց ընկերությունը:
- 1879, գարուն- Սկսվեցին Կարինի և Արաբկիրի քաղաքային բնակչության ելույթները իշխանության դեմ:
- 1880- Թիֆլիսում սկսվեց գործել Արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցերով զբաղվող Գր. Արծրունու խմբակը:
- 1881, մայիս- Խաչատուր Կերեկցյանի նախաձեռնությամբ Կարինում հիմնադրվեց «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը:
- 1881,նոյեմբ.- Մոսկվայի հայ ուսանողության ջանքերով ձևավորվեց «Հայրենասերների միություն» գաղտնի խմբակը:
- 1881-1882- Երևանում գործում էր «Հայասեր-ազգասեր» գաղտնի խմբակը:
- 1884, հունիս-Թուրքական հարկային ռեֆորմի դեմ ապստամբ. բռնկվեց Զեյթունում քաղաքագլուխ Պապիկ իշխանի ղեկավարությամբ:

- 1885, դեկտ. - Մկրտիչ Փորթուգալյանը Մարսելում կազմակերպեց «Հայոց հայրենասիրական միությունը», որը հետագայում դարձավ Արմենական կուսակցության կորիզը:
- 1887- Անգլիահայ գաղութի ճանաչված գործիչ Կ. Հակոբյանի նախաձեռնությամբ լոնդոնում կազմվեց «Հայկական հայրենասիրական ընկերությունը»:
- 1887- Ժնևում կազմակերպվեց Հնչակյան կուսակցությունը:
- 1890, հունիսի 18-20 - Ընդհարում կառավարական զորքերի և Կարինի անգեն հայ բնակչության միջև:
- 1890, հուլիսի 15- Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպեցին Գում-Գափուի ցույցը:
- 1890, ամռանը - Թիֆլիսում կազմակերպվեց, «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը, որը հետագայում կոչվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն»:
- 1890, սեպտ. 24- Սարգիս Կուկունյանի խումբը անցավ թուրքական սահման:
- 1894, օգոստ. 1- Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1895, մայիսի 11- Կ. Պոլսի՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները ընդարձակ հուշագիր և հայկական բարենորոգումների նախագիծ ներկայացրին Բ. Դռան:
- 1895, հոկտ. 5-նոյ. 1- Հայերի զանգվածային ջարդեր Արևմտահայաստանում և Անատոլիայում թուրք. պետության միջոցով:
- 1895, հոկտ. 12- Զեյթունում ապստամբություն բռնկվեց:
- 1896, հունիսի 3- Սկսվեց Վանի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1896, օգոստ. 14- Կ. Պոլսի Օսմանյան բանկի՝ «Բանկ Օսմանի գրավումը» Բաբգեն Սյունու ղեկավարությամբ (Հնչակյաններ և դաշնակցականներ):
- 1896- Հայերի զանգվածային կոտորածներ Կ. Պոլսում և Ակնում:
- 1897, օգոստ. - «Խանասորի արշավանք» (Դաշնակցականներ):
- 1898- Բաբգենի կռիվը Սերոբ Աղբյուրի և թուրք զինվորների միջև:
- 1901- Առաքելոց վանքի կռիվը (Հայդուկային, Անդրանիկի ղեկավարությամբ):
- 1902, հուլիսի 4-7- Բրյուսելում կայացավ միջազգային կոնֆերանս հօգուտ Հայկական հարցի արդարացի լուծման:
- 1904, փետրվար- Սկսվեց Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը:

- 1904- Աղթամարի և Շամիրամի կռիվներ Անդրանիկի ղեկավարությամբ
թուրք զորքի դեմ:
- 1905, հունիսի 21- Մահափորձ Աբդուլ Համիդի դեմ:
- 1906- Երզրումի(Կարին) հայերի հուզումները:
- 1909-Ադանայի հայերի կոտորածները:
- 1914,սեպտ.-Հայ կամավորական խմբերի ստեղծումը:
- 1915, ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը: Հայկական մեծ եղեռնի սկիզբը:
- 1915, ապրիլի 20-մայիսի 19- Վանի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1915, հունիսի 12-հունիսի 3- Շապին-Կարահիսարի խիզախ
ինքնապաշտպանությունը:
- 1915- Ուրֆայի հայերի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1915,հունիսի 15 - Թուրքական կառավարությունը կախաղան
բարձրացրեց հնչակյան կուսակցության 21 ղեկավարների:
- 1915,հունիսի 13- Մուսա լեռան նշանավոր ինքնապաշտպանությունը:
- 1915-Մուշի գոյամարտը:
- 1917, մարտի 16- Թիֆլիսում հիմնվեց ,Հայ ժողովրդական
կուսակցությունը:
- 1917,մայիսի 2 - Զորավար Անդրանիկի նախագահությամբ Երևանում
բացվեց արևմտահայերի առաջին համագումարը:
- 1917, դեկտ. 29 - Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետը դեկրետ է
ընդունում ,Թուրքահայաստանիե մասին:
- 1918, մարտի 12-15 - Թուրքական բանակը գրավեց էրզրումն ու
Ալեքսանդրապոլը:
- 1918, ապրիլի 22 - Անդրկովկասի սեյմը Անդրկովկասը հայտարարում է
անկախ:
- 1918, մայիսի 21-26 - Սարգարապատի հերոսամարտը:
- 1918, մայիսի 25-28 - Ղարաքիլիսայի հերոսամարտը:
- 1918, մայիսի 23-29 - Բաշ-Ապարանի հերոսամարտը:
- 1918, մայիսի 26 - Ցրվեց Անդրկովկասի սեյմը:
- 1918, մայիսի 28 - Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումը:
- 1919, օգոստոսի 1 -Երևանում բացվում է Հայաստանի Պառլամենտը:
- 1920, օգոստոսի 10- Սևրի դաշնագրի կնքումը:
- 1920, նոյեմբերի 29- Իջևանում Հայաստանի հեղափոխական կոմիտեն
հրապարակեց հայտարարություն Հայաստանը Խորհրդային
Սոցիալիստական Հանրապետություն հռչակելու մասին (երկրորդ
հանրապետություն):

- 1920, դեկտ. 2 - Ալեքսանդրապոլի ստրկացնող պայմանագիրը Թուրքիայի
և Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունների
միջև:
- 1920- Հաճընի հայոց հերոսամարտը թուրքական զորքերի դեմ:
- 1920-21 - Այնթապի հայերի ինքնապաշտպանությունը:
- 1921, ապրիլի 22 - Ալեքսանդրապոլի ազատագրումը թուրքական
զավթիչներից:
- 1921, հոկտ. 13 - Կարսի Պայմանագիրը:
- 1921, դեկտ. - Սկսվում է սփյուռքահայության հայրենադարձությունը
Խորհրդային Հայաստան:
- 1921- հիմնվեց Ռամկավար Ազատական Կուսակցությունը (Կ.Պոլիս):
- 1947- Հիմնվեց Հայկական Համաշխարհային Կոնգրեսը (Նյու Յորք):
- 1975- Հիմնվեցին «Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը»,
և «Հայկական Ցեղասպանության Արդարադատ
Մարտիկներ»: Ձևավորվեց «Հայկական Ժողովրդային Շարժումը»,
թեև սկզբնավորվել էր 1970-ական թթ. կեսին:
- 1983-85- «Հայ Հեղափոխական Բանակի» ստեղծումը:
- 1991, սեպտեմբերի 21 - Հայաստանի երրորդ Հանրապետության
հռչակումը:

Արեւելյան հարցը եւ գլխավոր գերուժերի համառոտ դասակարգումը

- 28-26 դ.դ. մթա. - «Ն» - Արատտա-Շումերական
 25 դ. մթա. - «Ն» - Հայ-Բաբելոնական
 24-23 դդ. մթա. «Ն» - Աքքադա-Արմանական
 22-18 դդ. մթա. «Ն» - Բաբելոնա-Խեթական-Կասիթական-
 Միտտանի-Ասորական
 19-7 դդ. մթա. «Ն» Ասորական-Արարատյան՝ Վանի թագավորություն -
 Մարական
 6 - 4 դդ. մթա Աքեմենյան-Լյուդիական-Հունական
 3-րդ դ. մթա - 2-րդ դ. մթա - Պարթեական-Հունական-Հույն-
 Բակտրիական-Հռոմական
 2-րդ դ. մթա - 1-ին դ. մթա - Պարտիեական-Հայկական-Հռոմական
 1 - 3 դդ. մթ. Պարթեական- Հռոմեական
 3 - 7- դդ. մթ. Սասանյան - Հռոմեական-Բյուզանդական
 7-9 դդ. մթ. Արաբական- Բյուզանդական
 9-11 դդ. մթ. Արաբական- Հայկական-Բյուզանդական
 11-15 դդ. մթ. Բյուզանդական-Թուրքական
 16-19 դդ. մթ. Պարսկական-Թուրքական
 18-19 դդ. Ռուսական-անգլիական-Ֆրնասիական-գերմանական
 20 - 21- Անգլո-ռուս-ամերիկյան
 21 դ. Ամերիկյան-Եվրոմիություն-ռուս-չինական

Արեւելյան հարցը եւ միջազգային կարեւորագույն պայմանագրերը

- 188 մթա. Ապամեայի պայմանագիր: Սելեկյաններն ընդարձակ ծրագրեր էին մշակել Փոքր Ասիան ամբողջությամբ գրավելու ուղղությամբ: Տարածաշրջանի նկատմամբ իր հավակնություններն ուներ նաև Հռոմեական Հանրապետությունը: Դեռ ավելին՝ Հռոմը ցանկանում էր ջախջախել Սելեկյաններին և իր տիրապետությունը հաստատել Միջերկրածովյան ամբողջ ավազանում: Կողմերի միջև զինված ընդհարումն անխուսափելի էր: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ք.ա. 190 թ. Լիդիայի Մագնեսիա քաղաքի մոտ՝ Հերմոս գետի հովտում: Հռոմեացիները համոզիչ հաղթանակ տարան սելեկյան Անտիոքոս III թագավորի մեծաքանակ զորքերի նկատմամբ: Մագնեսիայի ճակատամարտը և երկու տարի անց՝ Ք.ա. 188 թ., կողմերի միջև կնքված Ապամեայի հաշտության պայմանագիրն ամբողջությամբ փոխեցին ուժերի հարաբերակցությունը Արևելքում և շրջադարձային եղան համաշխարհային պատմության մեջ:
- 183 մթա - Փառնակ Պոնտացու դաշինքը Փոքր Հայքի կառավարիչ Միհրդատի հետ:
- 179 մթա - Արտաշես Ա-ի մասնակցությունը Փոքր Ասիայի հինգ պետությունների խաղաղության պայմանագրին:
- 93 մթա. Հայ-պոնտական դաշինք: Տիգրան Մեծի և Պոնտոսի թագավորի Միհրդատ 6-րդի միջև: Պայմանագրի կետերը. 1. Հայաստանը իրավունք ուներ նվաճումներ կատարելու հյուսիս, հարավ և արևելք ուղղություններով: 2. Պոնտոսը իրավունք ուներ միայն արևմուտք նվաճումներ կատարելու: 3. Տիգրան մեծը պիտի ամուսնանար Միհրդատի աղջկա՝ Կլեոպատրայի հետ:
- 66 մթա. Արտաշատի պայմանագիր Տիգրան Մեծի և հռոմի զորավար Պոմպեոսի միջև: 1. Հայաստանը հրաժարվում էր իր արտաքին նվաճումներից, այսինքն հետևյալ երկրներից՝ Ասորիք (Սիրիա), Կիլիկիա, Փյունիկ (Լիբանան) և Պաղեստին: 2. Հայաստանին մնում է միայն հյուսիսային միջագետքը: 3. Ծովքի և կորդուքի միացյալ թագավոր էր դառնալու Տիգրան Մեծի որդին՝ դավաճան Տիգրան

- կրթները: 4. Հայաստանը հռոմին վճարելու էր 6000 տաղանդ արծաթ:
- Հստ կնքված խաղաղության եւ բարեկամության պայմանագրի՝
1. Տիգրան 2-րդ Մեծը Հռոմին զիջեց Հայկական կայսրապետության բոլոր տարածքները, բացի հայ ժողովրդի բնօրրանից՝ Մեծ Հայաստանից:
 2. Հռոմեական կայսրապետությունը ճանաչեց Մեծ Հայաստան պետության անկախությունն ու տարածքային ամբողջականությունը:
 3. Մեծ Հայաստան պետության կազմի մեջ էին մտնում նաեւ Գուգարք նահանգը եւ հատուկ սահմանապահ (կուսակալական) շրջան Գողերձականը:
- Ք.ա. 66 թ. միջազգային իրավունքի անկախ, ինքիշխան սուբյեկտ ճանաչված Մեծ Հայաստան պետությունն ուներ 316.895 քառ. կմ տարածք
- 84 մթա - Դարդանոսի բանավոր պայմանագիրը: Հռոմի եւ Պոնտոսի Միհրդատ Եվպատոր թագավորի միջեւ տեղի ունեցավ առաջին պատերազմը, որի առաջին փուլում Միհրդատը գրավեց ողջ Փոքր Ասիան եւ անցավ Բալկանյան թերակղզի: Սակայն 87 թ. Հռոմեացի Սուլլային հաջողվեց երկու ճակատամարտերում՝ Քերոնիայի եւ Օրքոմենի մոտ ջարդել Պոնտոսի զորքերը: Դարդանոսի պայմանագրով Միհրդատը հրաժարվեց իր արտաքին նվաճումներից:
- 37 թ. - «Ա» - Հաշտության բանակցություններ Հռոմի եւ Պարթևստանի միջեւ: Հայաստանի տարածքային կորուստները:
- 20 մթա - «Ա» Հռոմեական-Պարթևական համաձայնագրի կնքում, որով վերջ տրվեց նրանց միջեւ պատերազմական վիճակին:
- 63 թ. «Ա» - Հռանդեայի ճակատամարտը Հռոմի եւ Հայ-պարտեական զորամասերի միջեւ, որի արդյունքում հաղթանակ են տանում վերջիններս: Հռանդեայի համաձայնագրի կնքումը՝ որով Տրդատ Արշակունին Հռոմի կողմից ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր (63-88 թթ.):
- 194 - «Ա» -Հայոց թագավոր Վաղարշ Բ-ի եւ Սեպտիմիոս Սեւերոս կայսեր միջեւ կնքված համաձայնագիրը:
- 199 - «Ա» - Խաղաղության դաշինք Սեւերոս կայսեր եւ պարթևական արքայից-արքա Վաղարշ Դ-ի միջեւ:

- 217 թ. - «Ա» Մակրինոս կայսրը (217-2218 թթ.) խաղաղության պայմանագիր կնքեց պարթևական Արշակունի վերջին թագավոր Արտավան Ե-ի (209-224 թթ.) հետ:
- 244 - «Ա» - Փիլիպպոս Արաբը խաղաղության դաշն կնքեց պարսիկների հետ:
- 298 - Մծբինի պարսկահռոմեական 40-ամյա դաշնագիրը, որի համաձայն Հռոմն ու պարսկաստանը 40 տարի իրար դեմ պատերազմ չեն մղելու: Հայոց թագավոր դարձավ Տրդատ Յ-րդը:
- 363 - «Ա» - Հովհանոս Պարսկաստանի հետ հաշտություն է կնքում երեսուն տարով՝ մինչև 393 թ., որը համարվում է «ամոթալի»:
- Պարսից Շապուհ Բ արքայի և հռոմեական նոր կայսեր՝ Հովհանոսի (363-364թթ.) միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Մեծ Հայքի հարավային հինգ գավառները՝ 15 բերդերով և քաղաքներով, ներառյալ Հյուսիսային Միջագետքի մի քանի բնակավայրեր, որոնցից ամենամեծը Մծբինն էր, անցնում են Պարսկաստանին: Պայմանագրի մեկ այլ կետով կայսրը պարտավորվում է օգնություն ցույց չտալ Հայոց արքային Պարսկաստանի դեմ պայքարում: Արևելքում Հռոմի քաղաքականությունը բնութագրող այս պայմանագիրը IV դարի հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսը անվանել է «ամոթալի պայմանագիր»:
- 387 - «Ա» - Մեծ Հայքի թագավորության տարածքի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև:
- 422 - «Ա» - Հիսնամյա խաղաղության դաշնագիր՝ մինչև 472, Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև:
- 484 - Նվարսակի հաշտության պայմանագրի կնքումը:
- 506 - Խաղաղության դաշնագիր Բյուզանդիայի և Սասանյանների միջև:
- 532 - «Ա» - «Հավիտենական» հաշտություն Պարսկաբյուզանդական պետությունների միջև:
- 545 - «Ա» - Բյուզանդական դեսպանները Տիգրանում զինադադար կնքեցին հինգ տարի ժամկետով:
- 552 - «Ա» - Նոր հնգամյա զինադադար Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
- 570 - «Ա» - սեպտեմբերի 1 - Կնքվում է հայ-բյուզանդական դաշինքը:

- 575 - 578 - «Ա» - Եռամյա գինադադար Սասաբյան Իրանի եւ Բյուզանդիայի միջեւ:
- 591 - Պարսկաբյուզանդական հաշտության պայմանագիրը, Հայաստանի երկրորդ բաժանումը:
- 652 - «Ն» - Պայմանագիր՝ Թեոդորոս Ռշտունու եւ արաբ Մուավիայի միջեւ:
- 658 - 659 - «Ա» - Հաշտություն Մուավիայի եւ Կոստանդ Բ կայսրի միջեւ:
- 687 - «Ա» - Պայմանագիր խալիֆայության ու Բյուզանդիայի միջեւ:
- 1253 - 1256 - «Ն» - Հեթում Ա թագավորի ուղեւորությունը Կարակորում, եւ հայ-մոնղոլական պայմանագրի կնքումը:
- 1268 - «Ն» - Անտիքի իշխանության վերացումը: Հաշտության պայմանագրի կնքումը Եգիպտոսի եւ Կիլիկիայի միջեւ:
- 1555 թ-ի մայիսի 26-ին կնքվել է Ամասիայի հաշտության պայմանագիրը, որով վերահաստատվել է 1514 թ-ի (Չալդրանի ճակատամարտից հետո) Հայաստանի բաժանումը. Արևմտյան Հայաստանը, ներառյալ Բագրևանդն ու Վասպուրականը, մնացել է օսմանյան, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանի տիրապետության տակ: Թուրքիային են անցել նաև Արևմտյան Վրաստանը, արաբական Իրաքը՝ ներառյալ Բաղդադը, իսկ Պարսկաստանին՝ Արևելյան Վրաստանը և Այսրկովկասի արևելյան մասը: Կարսի շրջանը հայտարարվել է «չեզոք գոտի», իսկ բերդն ավերվել է:
- 1590 թ-ի մարտի 21-ի Կոստանդնուպոլսի հաշտության պայմանագրով՝ Արևելյան Հայաստանը, Վրաստանը, Այսրկովկասի արևելյան մասը, Քրդստանի և Լուրիստանի (Արևմտյան Պարսկաստան) զգալի մասն անցել են Թուրքիային:
- 1612 թ. պայմանագիրը. 1603–07 թթ-ին Շահ Աբաս I-ը զավթել է Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Քրդստանի հարավային մասը և Լուրիստանը: Այդ նվաճումները վերահաստատվել են 1612 թ-ի նոյեմբերի 20-ի Կոստանդնուպոլսի պայմանագրով:
- 1619 թ-ի սեպտեմբերի 29-ի պայմանագրով վերահաստատել 1612 թ-ի պայմանագրով որոշված սահմանները:
- 1639 թ-ին կնքված Կասր ի Շիրինի (Կասրե-Շիրին) պայմանագրով՝ մասնակի փոփոխություններով վերահաստատվել են 1555 թ-ի Ամասիայի պայմանագրով նշված սահմանները: Հայաստանը կրկին վերաբաժանվել է 2 տերությունների միջև՝ հետևյալ սահմանագծով. Զավախքի լեռներից Ախուրյանի հոսանքով հասել է Արաքս գետ, թեքվել արևմուտք, ապա՝ Հայկական Պարի

- չրբաժան գծով, Մասիսների գագաթներով ձգվել մինչև Վասպուրականի լեռները, Զագրոսի լեռնաշղթայով անցել թուրք-պարսկական այժմյան սահմանագծով: Այս սահմանը գրեթե անփոփոխ է մնացել մինչև 1828 թ., երբ Թուրքմենչայի պայմանագրով՝ Արևելյան Հայաստանը միացել է Ռուսաստանին: Պայմանագրին հաջորդած 80-ամյա խաղաղությանը Արևելյան Հայաստանի տնտեսությունը որոշ աշխուժացում է ապրել, բայց Արևմտյան Հայաստանում շարունակվել է քայքայումը:
- 1667 – Առևտրական պայմանագիր է կնքվում Ռուսաստանի եւ Սպահանի հայ առևտրական ընկերության միջև:
- 1724 թ. պայմանագիրը. Ռուս-թուրքական պատերազմի վտանգը կանխվել է 1724 թ-ի հունիսի 13-ի պայմանագրով:
- 1727 թ-ի հոկտեմբերի 4-ի Համադանի հաշտությանը Աշրաֆը ճանաչել է Թուրքիայի իրավունքները նվաճված հողերի վրա, իսկ սուլթանը Աշրաֆին՝ Պարսկաստանի տիրակալ:
- 1732 թ-ին կնքվել է թուրք-պարսկական հաշտություն, որով Թուրքիան պահպանել է այրսկովկասյան հողերը՝ Արաքսից հյուսիս:
- 1736 թ-ին էրզրումում (Կարին) կնքված պայմանագրով՝ Թուրքիան ճանաչել է Պարսկաստանի տիրապետությունն Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում:
- 1746 թ-ի սեպտեմբերի 4-ի թուրք-պարսկական հաշտությանը հաստատվել են 1639 թ-ի պայմանները:
- 1800 – հունվարի 12 – Թուրք-ֆրանսիական պայմանագիր, որով Եգիպտոսը վերադարձվում է Թուրքիային:
- 1800 – Անգլո-թուրքական պայմանագիրը, որով Սեւ ծովը եւ նեղուցները փակ են հայտարարվում:
- 1801 – հունվար – Անգլո-պարսկական պայմանագիրը ընդգեմ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի:
- 1801 – սեպտեմբերի 12 – Ալեքսանդր Ա-ի մանիֆեստով Արեւելյան Վրաստանը եւ հյուսիս-արեւելյան Հայաստանի որոշ շրջաններ՝ Լոռի, Փամբակ, Ղազախ, Բորչալու գավառները միացվում են Ռուսաստանին:
- 1807 – մայիսի 4 – կնքվում է Ֆինկենշտեյնի պայմանագիրը Ֆրանսիայի եւ Պարսկաստանի միջև, որն ուղղված էր Ռուսաստանի եւ Անգլիայի դեմ:

- 1807 – հունիսի 8 – Կնքվում է Տիլսիթի հաշտությանը Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջեւ:
- 1809 – հունվարի 17 – Դարգանելում կնքվում է անգլո-թուրքական պայմանագիրը, ավարտվում է անգլո-թուրքական 1807-1809 թթ. պատերազմը:
- 1812 – մայիսի 16 – Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքվում է Բուխարեստի հաշտության պայմանագիրը: Ռուսաստանին է միացվում Բեսարաբիան:
- 1813 – հոկտեմբերի 12 – Ղարաբաղի Գյուլիստան ամրոցում ստորագրվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը, որի համաձայն Պարսկաստանը ճանաչում է Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի, Ղուբայի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի եւ Շորաքյալի գավառների միացումը Ռուսաստանին:
- 1814 – նոյեմբերի 25 – Թեհրանում ստորագրվում է անգլո-պարսկական պայմանագիրը, որով Անգլիան խոստանում է նպաստել Գյուլիստանի պայմանգրի վերանայմանը:
- 1823 – Կարինում կնքվում է թուրք-պարսկական հաշտության պայմանագիրը, որով Բայազետ քաղաքը կրկին վերադարձվում է Թուրքիային:
- 1828 – փետրվարի 10 – Թուրքմենչայում կնքվում է հաշտության պայմանագիր Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ, որի համաձայն Ռուսաստանին են միացվում Երեւանի եւ Նախիջեւանի խանություններն ու Օրդուբադի շրջանը:
- 1829 – սեպտեմբերի 2 – Ադրիանապոլսում ստորագրվում է ռուս-թուրքական հաշտության պայմանագիր: Ռուսաստանին են միացվում Ախալքալաքը, Ախալցխան, Սեւ ծովի արեւելյան ափը, Անապա եւ Փոթի նավահանգիստերը:
- 1830 – հունվարի 22 – Լոնդոնի պայմանագրով ճանաչվում է Հունաստանի անկախությունը:
- 1833 – հունիսի 26 – Հունքիար – Իսքելեսիի պայմանագրի ստորագրումը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ:
- 1856 մարտի 18 – Կնքվում է Փարիզի հաշտության պայմանագիրը, որով ավարտվեց Ղրիմի պատերազմը: Այդ պայմանագրով հունիսի 28-ին Կարսը վերադարձվում է Թուրքիային:

- 1856 – Սուլթան Աբդուլ Մաջիդը հրապարակում է հաթը Հումայուն կոչվող բարենորոգումների հրովարտակը՝ «Թանզիմաթի» երկրորդ ակտը:
- 1877 – ապրիլի 12 (24) – Ալեքսանդր Բ-ը ստորագրեց Թուրքիային պատերազմ հայտարարելու մանիֆեստը:
- 1878 – հունվարի 19 – Ադրիանապոլսում զինադադար կնքվեց Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ:
- 1878 – փետրվարի 19 (մարտի 3) – Յարական կառավարության եւ Թուրքիայի միջեւ ստորագրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը:
- 1878 – մայիսի 23 (հունիսի 4) – Կնքվեց անգլո-թուրքական համաձայնագիրը, որով Անգլիան Թուրքիայից գրավեց Կիպրոս կղզին:
- 1878 – հունիսի 1 (13) – Բացվեց Բեռլինի կոնգրեսը, որի աշխատանքները շարունակվեցին մինչեւ հուլիսի 1-ը (13):
- 1896 – հունվարի 30 – Զեյթունի ապստամբությունից հետո հաշտության պայմանագիր կնքվեց ապստամբների, թուրք կառավարության եւ վեց տերությունների ներկայացուցիչների միջեւ:
- 1914 – հունվարի 26 – Կ.Պոլսում Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքվեց համաձայնագիր՝ Արեւմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու համար, որը չիրականացավ:
- 1914 – հուլիսի 20 – Կ. Պոլսում կնքվեց Գերմանիայի եւ Թուրքիայի գաղտնի դաշնագիրը:
- 1918 – մարտի 3 – Կնքվում է Բրեստի պայմանագիրը:
- 1920 – օգոստոսի 10 – Սեւր քաղաքում (Փարիզի մոտ) դաշնակիցների եւ Թուրքիայի սուլթանական կառավարության միջեւ կնքվում է դաշնագիր, որի 6-րդ հատվածի 88-91 հոդվածները վերավերում են Հայաստանին:
- 1920 – օգոստոսի 10 – Սով. Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանը Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ կնքում է համաձայնագիր:
- 1920 – Դաշնակցական կառավարության պատվիրակությունը Ալեքսանդրապոլում թուրքական զավթիչների հետ կնքում է Հայաստանը անդամահատող եւ ստրկացնող ապօրինի պայմանագիր: Նույն օրը կեսօրին Երեւանում պայմանագիր է ստորագրում Ռուսաստանի հետ իշխանությունը կոմունիստներին հանձնելու կապակցությամբ:

- 1921 – փետրվար-մարտ - Լոնդոնի կոնֆերանսը կայացավ մի կողմից՝ Գերմանիայի, Թուրքիայի և մյուս կողմից՝ Անտանտի ու դաշնակցային պետությունների միջև: Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկությամբ քննարկման դրվեց նաև Սևրի պայմանագիրը վերանայելու հարցը:
- 1921 – մարտի 16 – Սովետա-թուրքական պայմանագրի կնքումը Մոսկվայում:
- 1921 – հոկտեմբերի 13 – Մի կողմից Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի, իսկ մյուս կողմից Թուրքիայի միջև կնքվում է Կարսի պայմանագիրը:
- 1923 – հունիսի 23 – Լոզանի հաշտության պայմանագիրը:
- 1997 – օգոստոսի 29, Մոսկվայում Ռուսաստանի և Հայաստանի նախագահներ Բ. Ելցինի և Լ. Տեր-Պետրոսյանի կողմից ստորագրվեց «ՌԴ-ի և ՀՀ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիր:

Հայկական Հարցի ներկա խնդիրները

Հայկական հարցի էությունն անցյալում էլ, այժմ էլ նույնն է. հայ ժողովրդի իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում անկախ և ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների ստեղծում: Հայկական հարցի լուծումը կարող է լինել միայն մեկը՝ հայոց լիարժեք պետականության վերականգնում պատմական Հայաստանի առնվազն այնպիսի ընդարձակ մի հողատարածքում, որտեղ հայոց քաղաքակրթության երկարատև անվտանգ գոյությունը երաշխավորված կլինի:

Այլ կերպ ասած՝ Հայկական հարցը հայ ժողովրդի անվտանգության հարցն է, որը պահանջում է երկու նախադրյալի ապահովում. առաջին՝ հայկական լիարժեք և ամուր պետականության ստեղծում, երկրորդ՝ այդ պետականության անվտանգությունն ու կենսունակությունն ամրագրող հողային երաշխիքներ: Ընդ որում՝ մի նախադրյալի ապահովումն առանց մյուսի անիրագործելի է. ո՛չ հայկական պետությունն է ի վիճակի գոյատևել նախկին Հայկական հորհրդային Սոցիալիստական Հանրապետության 29,800 կմ² խիստ խոցելի, իր անպաշտպանունակությամբ ինքնըստինքյան «ագրեսիա հրավիրող» սահմաններում, ո՛չ էլ հայկական պետության բացակայությամբ հնարավոր կլինի հայ ժողովրդի գոյությունն առհասարակ:

Հայ ազգի և հայկական քաղաքակրթության գոյությունը վտանգված էին նախկինում, վտանգված են և այսօր, որովհետև չլուծված է մնում տարածքային՝ հողային խնդիրը: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը դարձյալ հայտնվել է «լինե՞լ, թե՞ չլինել»-ի դրության մեջ: Խորհրդային Միության փլուզման գործընթացին զուգընթաց, հայության դեմ Թուրքիայի և նրա կրտսեր դաշնակից Ադրբեջանի ծավալապաշտական բացահայտ նկրտումներն ու վայրագ գործողությունները ևս մեկ անգամ վտանգում են արդի Հայաստանի ֆիզիկական գոյությունը: Վերջին երկուսուկես տասնամյակի անկախ գոյության փորձը փաստել է, որ Հայաստանը կարողացել է գոյատևել՝ 42,000 քառ. կիլոմետրանոց բնական որոշակի սահմաններ ունեցող տարածքի վրա վերահսկողություն հաստատելու շնորհիվ միայն, ներառելով Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը՝ ազատագրված տարածքներով հանդերձ: Սա՛ է Հա-

յաստանի անվտանգությունն ապահովող այն նվազագույն հողակտորը, որից պակաս տարածքում հայոց պետականության գոյությունն այլևս կարող է անհնարին լինել:

Սա է այն նվազագույն հողակտորը, որն ապահովում է Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ու միջազգային ուժերի քաղաքական, ռազմական, հոգեբանական ու աշխարհաքաղաքական շահերի բխումներում և փոխազդեցություններում: Միևնույն ժամանակ, ամենևին չի բացառվում, որ Թուրքիայի և Ադրբեջանի անհաշտ քաղաքականությունը և վերջինիս կողմից պատերազմի հավանական սանձազերծումը Հայաստանին այլ ելք չթողնեն, քան էլ ավելի ընդլայնելու հայոց ռազմաքաղաքական իշխանությունը հայրենիքի բռնազավթված տարածքների վրա, ընդհուպ մինչև այն կետը, երբ թշնամին այլևս կդադարեցնի սպառնալն ու կհաշտվի հայերի՝ իրենց հայրենի հողի վրա պետություն ունենալու իրողության հետ¹:

Ուստի Հայկական հարցի լուծաման եւ Հայ ժողովրդի անվտանգության ապահովման ուղղությամբ հարկ է քննարկել եւ լուծել հետևյալ դրույթները.

- Ա – Հայ ժողովրդի պատմական հայրենիքի հողային ամբողջականություն՝
 - Հայաստանի Հանրապետություն
 - Արցախ (Լեռնային եւ դաշտային)
 - Նախիջևան
 - Ախալքալաք
 - Արեւմտյան Հայաստանը ըստ Սելրի Դաշնագրի
- Բ – Հայ ժողովրդի ազգային միացյալ պետականության ստեղծում, որի առանցքային մասն է կազմում Հայաստանի Հանրապետությունը:
- Գ – Հայկական Յեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից եւ փոխհատուցման հարցը:
- Դ – Արեւմտյան Հայաստանում եւ Անատոլիայում բնակվող ծածուկ հայերի մարդկային իրավունքների վերականգնում:
- Ե – Սփյուռքահայության ներգաղթը Հայրենի հող:
- Զ – Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող հայկական հողերի վրա մնացած մշակութային ժառանգության վերադարձը իրենց իսկական տիրոջ՝ Հայ ժողովրդին եւ նրանց պահպանումը:

¹ - «Ապագա» Հանդես, համար 33, 2008 թ. Հունիս:

Հայկական Հարցի լուծման մանիֆեստ՝ ծրագրային հայտարարություն

2015 թվականին լրանում է հայոց ցեղասպանության 100-ամյակը: Թե Հայաստանի հանրապետությունում, եւ թե Հայկական սփյուռքում պատրաստվում են ոգեկոչելու այդ դարելիցը:

Այդ 100 տարիների ընթացքում ի՞նչ է կատարել հայ ժողովուրդը, իր կորցրած մարդկային, տնտեսական, հասարակական, քաղաքական եւ մշակութային արժեքների գնահատման, հատուցման ու վերականգման ուղղությամբ: Այդպիսի գնահատական տալու համար անհրաժեշտ է հետադարձ հայացք նետել անցյալին, վերագնահատել տեղի ունեցած դրական ու բացասական փորձերը, դասեր վերցնել մանր ու խոշոր սխալներից, ապա վերլուծելով ներկա իրավիճակն ու առկա մարտահրավերները, ծրագրել հետագա քայլերն ու պարտավորությունները եւ հարմարավետորեն բաժանել նրանց հանձնառուների միջեւ:

Անկախ նրանից, որ այդ ծրագրերի գործադրումը ինչ եւ ինչքան աղբյուր կամ աղբյուրներ կպահանջի, անկախ նրանից, որ դրանք ժամանակագրական ինչ փուլեր ու տեվողություն եւ ֆինանսական միջոցներ կարիք կունենան, փաստ է, որ այդպիսի ծրագրեր որոնց գլխավորն է համրվում Հայ Համագրային Ռազմավարական Ծրագիրը (ՀՀՌԾ) անհրաժեշտ է հայ ժողովրդի ներկա եւ ապագա բոլոր սերունդների համար: Այն պիտի հասակական-քաղաքական, հասարակական-տնտեսական եւ հասարակական-մշակութային բոլոր միջոցառումների հիմքն ու թելադրող սկզբնաղբյուրը լինի, այնպես, որ ժամանակի ընթացքում տարբեր պայմաններում հնարավոր կդառնա այդ ծրագրի տարբեր մասնիկների իրագործումը: Սակայն ի՞նչ ակնկալիքներ կլինեն այդ ազգային ռազմավարական ծրագրի բացակայության դեպքում: Պարզ պատասխանը այն ինչ է, եթե ոչ Հայ ժողովուրդի ներկա իրավիճակը մանավանդ Հայոց ցեղասպանության կապակցությամբ:

Արդեն շուրջ հարյուր տարիներ են եկել ու գնացել, սակայն հայ ժողովուրդը կատարել է համարյա ոչինչ, եւ հիմա դրա դարեդարձին մտադիր է եւս մի շարք միջոցառումներ իրականացնել, որոնք մեծ հավանականությամբ ոչինչով չեն տարբերվելու այդ հարյուրամյա անգործունեությունից:

Մինչ օրս, թե Առաջին Հանրապետության, թե Խորհրդային Հայաստանի եւ այժմ երրորդ Հանրապետության իշխանությունները, եւ սփյուռքում գործող հայկական ավանդական կուսակցություններն ու նորագույն կազմակերպությունները չեն վերցրել արդյունավետ քայլեր

Հայկական Հարցի ամբողջական լուծման ուղղությամբ, եւ չունեն հստակ արդյունավետ ծրագրեր, մանավանդ, որ շարունակում են հետեւել անցյալի սխալ գործընթացները, ոմանք էլ շահագործելով Հայկական հարցը, միայն եւ միայն օգտագործում են այն իրենց գոյատեւման նպատակով՝ իրենց գրպաններն են լցնում Հայ ժողովրդի ազգային զգացումների հաշվին:

Հայկական Հարցի լուծման համար անհրաժեշտ է հետեւյալ դրույթները.

- 1- Ուժեղ Ազգային բանակ
- 2- Ուժեղ Ազգային Տնտեսություն (Արդյունաբերություն, Գյուղատնտեսություն)
- 3- Հայրենի հողի վրա Հայ ժողովրդի բնակչության թվի աճ
- 4- Գործունյա Գիտական ներուժ
- 5- Համազգային հասարակական-քաղաքական, հասարակական-մշակութային, հասարակական-հայրենասիրական-հոգեբանական մակարդակի բարձրացում
- 6- Միջազգային քաղաքական ու իրավաբանական գործունեության աշխուժացում

Նշված դրույթների քննարկման համար հարկավոր է քննարկել

- ա) Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների անելիքները:
- բ) Հայաստանից անջատված հայկական տարածքների վրա ապրող հայերի անելիքները:
- գ) Հայկական Միությունի անելիքները:

ա) Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններ (ՀՀ, ԱՀ)

Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունները հանդիսանում են Հայկական հարցի լուծման կարեւարագույն հենակետն ու առանցքը, ուստի նրանց ժողովուրդն ու պետությունը կրում են չափազանց մեծ պարտականություններ:

Ա- Ժողովուրդ

- 1- ՀՀ եւ ԱՀ տարածքում ապրող հայ ժողովուրդը պարտավոր է ապահովել Հայրենի Ազգային իշխանությունը: Ժողովուրդը պիտի փաստի, որ պատկանում է մի ազգի, որը ցանկանում է համաշխարհային պատմության մեջ ունենալ իր ուրույն եւ պատվավոր տեղը, ուստի այդ հանգրվանին հասնելու համար պիտի հույժ պայքար մղի թե ներքին կարգով եւ թե արտաքին ասպարեզում, նա պիտի ոտքի ելնի եւ պայքարի ներքին եւ արտաքին դավադրությունների, ապագային ու հակահայկական տարրերի ու գործընթացների դեմ, եւ փաստի, որ միասնական ազգ է եւ օժտված է բարձր կամքով՝ կերտելու համար հայրենի երկիր, տեղական ժողովրդավարական պետություն, ազգային տնտեսություն, ուժեղ ազգային բանակ, ազգային գիտություն եւ մշակույթ, գիտակից հասարակություն:
- 2- Այդպիսի նպատակներին հասնելու համար, ազգասեր հայր պարտավոր է մնալ հայրենի հողի վրա եւ պայքարել բոլոր խոչընդոտների դեմ: Եթե Հայրենի հայր իր լուսավոր ապագան տեսնում է օտար ավերում, այդ հայր երբեք չի կարող ստեղծել ու պահպանել իր հայրենիքը եւ հարատւել համաշխարհային պատմության բեմահարթակում:

- 3- Մշակութային-հոգեբանական փոփոխություն, վնասագերծել հայրենի համայնքները անհարիր վարքերից ու ապրելակերպից:
- 4- Հայրենի ժողովուրդը բաց գրկով պիտի դիմավորի ներկա արտասահմանում ապրող իր ազգակիցներին, առանց շահադիտական մոլուցքի, միայն միասնական համագործակցություն մշակելու, միասնական բարեկամական ու բարիդրացիական կենցաղ վարելու նպատակով:
- 5- Համայնքային համագործակցության եւ հասարակական օժանդակության հիմնարկների (ինստիտուտներ) կազմակերպում Հայրենի իշխանության պարզ եւ թափանցիկ ծրագրային ու նյութական ապահովությամբ:
- 6- Հայրենիքի բնապահպանության ապահովման ուղղությամբ համաժողովրդական ծրագրեր իրականացնել հայրենի բոլոր տարածքներում:
- 7- Ժողովրդական կամավորական շարժման ենթակառույցների ստեղծում եւ տարածում ՀՀ եւ ԱՀ ամբողջ տարածքում: Այդ ենթակառույցները պիտի իրենց գործունեությունը ծավալեն ու տարածեն ՀՀ, Արցախի, Արեւմտյան Հայաստանի, Ախալքալաքի ու Սփյուռքի միջավայրերում:
- 8- Ավելյալ ծրագրեր:

Բ- Պետություն

Բ-1- Ներքին քաղաքականություն

- 1- Հայտարարել արտակարգ իրավիճակ:
- 2- Վերանայել սահմանադրությունը, որի հիմքը պիտի հանդիսանա ժողովրդավարական-սոցիալիստական վարչակարգը: Այս կետը ունի իր հիմնավորված պատճառները:
- 3- Նշված հիմնական փոփոխությունների իրագործման համար կարիք կլինի անցկացնել հանրաքվե՝ միջազգային վստահելի կազմակերպությունների հսկողությամբ: Հարկ է օգտագործել Եվրոպական լավագույն փորձերից:
- 4- Հիմնավորել «Պետությունը ժողովրդի համար - ժողովուրդը պետության համար» նշանաբանը, եւ իրականացնել այն բոլոր ասպարեզներում:
- 5- Փոխել Ազգային հիմնը, ընդունել Խորհրդային Հայաստանի հիմնը, հարմարմարեցնել ՀՀ նորագույն իրավակարգին, կրճատել 30 վայրկյանի սահմաններում, քանի որ այն չափազանց ավելի ոգեւորիչ է քան ներկա անփառունակ հիմնը:
- 6- Ազգային Բանակը դարձնել երկրի ամենակարեւոր հիմնարկը:
- 7- Բացահայտել ու հիմնովին վնասագերծել մատոնական օթյակներն ու ռոթարիական ակումբները, 300-հոգիանոց կոմիտեին պատկանող բոլոր անձանց ու հիմնարկներին: Այդպիսի շրջանակների հետ առնչությունը համարել ազգային դավաճանություն:
- 8- Արգելել այսպես կոչված «Ազգային ավանդական Կուսակցությունների» գործունեությունը Հայրենիքում, մինչեւ այն պահը, երբ նրանք նույնանուն կազմակերպություններ ունեն արտերկրում: Այդ պայմանը գոհացնելուց հետո, դատի տալ նրանց՝ իրենց անցյալ հայրենակործան գործողությունների պատճառով, որոնցից կարելի է նշել Ալեքսանդրապոլի դաշնագրի, Պրոմեթեի դաշինքի ստորագրումն ու Փաշիստական գերմանիայի հետ համագործակցությունը, Ներգաղթի դեմ գոծողությունները, մի քանի տասնյակ հայորդիների ահաբեկումը Իրանում, ԱՄՆ-ում, Լիբանանում եւ այլուր, Արաբա-իսրայելյան պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական կազմակերպության լրտեսական ծառայություններ մատուցած

- կուսակցություններին, որոնցից ոմանք դեռևս շարունակում են այդպիսի ծառայություններ:
- 9- Ազգային արդյունաբերության առաջնահերթությունը դարձնել Ազգային բանակի սպառազինման, զարգացման, նորագույն տեխնոլոգիաներով օժտելու հանգամանքն ու ծրագիրը:
 - 10- Մշակել ազգային-տեղական արդյունաբերական Պրոյեկտիվ տնտեսություն (Proejective Approach) որի առաջնահերթությունը պիտի լինի նորագույն զենքերի, գյուղատնտեսական, արդյունաբերական ռոբոտիկական մեքենաշինությունը:
 - 11- Բարձրագույն ուսումնական հիմնարկները հարմարեցնել երկրի քաղաքական-տնտեսական, արդյունաբերական, գյուղատնտեսական նպատակներին:
 - 12- Ազգային ակադեմիան դուրս բերել լճացումից ու ինքնանպատակ լինելուց, պարտավորեցնել նրա զանազան ինստիտուտներին զբաղվել երկրին հարկավոր կիռարական հետազոտություններով:
 - 13- Չարգացնել համացանցային ու տեղեկատվական տեխնոլոգիաները:
 - 14- Ստեղծել Համահայկական դրամատուն՝ բանկ, որի աշխատանքի հիմքն է լինելու համացանցը (ինտերնետ), որին հնարավորություն կունենան մասնակցել նաև աշխատասփյուռ հայությունը, որի շնորհիվ համայն հայություն նյութական պոտենցիալը պիտի ծառայի հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը:
 - 15- Ստեղծել համացանցային տեղեկատվական պետական կայքէջ (Ձայնասփյուռ, հեռուստատեսություն, տպագիր լրատու), որի միջոցով աշխարհասփյուռ հայությունը կձանոթանա երկրում եւ սփյուռքում կատարվող բոլոր իրադարձություններին: Եւ փոխադարձաբար Հայրենի ժողովուրդը կձանոթանա արտերկրյա հայությանը:
 - 16- Ստեղծել Համահայկական Ժողովրդական Խորհրդրան, որի ֆիզիկական կենտրոնը գտնվելու է Հայոց Մայրաքաղաքում, նրա նիստերը լինելու են ամսական մեկ անգամ վիրտուալ նորագույն տեխնոլոգիաների օժանդակությամբ, իսկ ֆիզիկական ընդհանուր ժողովը տարեկան մեկ անգամ ՀՀ-ում, բոլոր ճամբորդական ու կեցության ծախսերը պիտի հոգան տվյալ համայնքներն ու անհատ պատգամավորները: Պատգամավորների ընտրությունը կատարել համացանցային

տեխնոլոգիաների օժանդակությամբ: Խորհրդարանի հիմնական պարտականությունն է լինելու Խորհրդարանի սահմանադրության, համահայկական ծրագրերի գործադրման եղանակի մշակումն ու ֆինասավորման միջոցների քննարկումներն ու ապահովումը: Նրա գործադիր օղակներից է լինելու Համահայկական Բանկը:

- 17- Ստեղծել վարչապետին կից Ազգային Ռազմավարական Ծրագրերի Կազմակերպություն, որը պիտի մշակի երկարաժամկետ, միջինժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր Ազգային տնտեսության զարգացման համար:
- 18- Երկրի նախագահի ամսական ժողովրդական հանդիպումով, հանդես գալ երկրի ռազմական, անվտանգության ու արտաքին հարաբերությունների ու միջազգային իրադրությանը մասնակցած իր գործունեության եւ Համահայկական ծրագրերի մասին ընդարձակ զեկուցմամբ:
- 19- Երկրի վարչապետի ամսական զեկուցմամբ ժողովրդին ներկայացնել կատարված բոլոր աշխատանքներն ու իրականացվող ծրագրերի վերջին իրադրությունը:
- 20- Ազգային ժողովը հարկ է մշակի հակակաշառային խիստ կարելու օրինագիծ եւ օրենք, որի գործադրումը պիտի հանձնվի երկրի բարձրագույն հետախուզական, դատական, ու ոստիկանական մարմիններին:
- 21- Խիստ ստուգել ՀՀ նախագահների, վարչապետների, նախարարների ու բարձրաստիճան պետական պաշտոնյաների ունեցվածքը՝ պաշտոնը ստանձնելուց առաջ եւ հետո մինչեւ նրանց պաշտոնավարության ավարտը:
- 22- Պատկան նախարարությունները փաստացի զեկույցներ պիտի ներկայացնեն իրենց կատարած աշխատանքների մասին, որը պիտի հասանելի լինի ժողովրդական բոլոր խավերին:
- 23- Մշակել համացանցային հենակետ, երկրի բոլոր բնագավառների կարիքների ու խնդրվող միջոցների տվյալների տեղավորման համար եւ առիթ ստեղծել Համահայկական մակարդակով համագործակցության պոտենցիալի մասնակցությունը այդ կարիքների վերացման ուղղությամբ:
- 24- Հայաստան Համահայկական Հիմնադրամը պիտի անցնի պետական ստուգման ու հաշվետվության խիստ քննարկմանը՝ համապատասխան կանոնակարգով: Նա պիտի իր գործունեության իսկական ոլորտում ներառի Հայկական

- զինված ուժերի սատարման երկարատև ծրագիրը, եւ ստեղծի բանկային հատուկ հաշիվ Համահայկական Բանկում:
- 25- Կատարել հարկային համակարգի հիմնական բարեփոխումներ: Երկրում աշխատող բոլոր մանր ու խոշոր ձեռնարկություններին համակարգչային գրանցման պարտադիր օրենքի ենթարկել, օրինագանգներին ենթարկել խոշոր տուգանքների ու երկարատև ազատազրկման:
- 26- Օլիգարխիան համարել ազգային դավաճանություն եւ դատել համապատասխան օրենքներով: Տնտեսական չարաշահումներ կատարած անձանց ենթարկել խիստ պատժամիջոցների (գումարային եւ ազատազրկման):
- 27- Իրականացնել համատարած հայրենասիրական պրոպագանդա, ժողովրդի ազգային ու հայրենասիրական զգացումներն ու հավատքը բարձր մակարդակի վրա դնել ու զարգացնել:
- 28- Սփյուռքի նախարարությունը պիտի ներգրավի սփյուռքահայությանը իր աշխատանքներում, ծառայի որպես մի կամուրջ արտերկրում ապրող հայերի եւ հայրենի ժողովրդի ու պետության միջեւ առանց խմբակցային կողմնորոշումների: Օգնել սփյուռքահայությանը հայապահպանման ծրագրերով, մշակութային ձեռնարկների, գրականության առաքման, եւ այդպիսի այլ միջոցներով, կազմակերպել հարատև ներգաղթի ծրագիր:
- 29- Մշակույթի նախարարությունը, հարկ է զարգացնել երկրի մշակութային հիմնարկները՝ կազմակերպել արտասահմանային կանոնավոր ամսական ձեռնակներ (Սփյուռքի նախարարության հետ համատեղ), որի եկամուտի գլխավոր մասը պիտի ծառայի Ազգային բանակի ու գիտական հիմնարկների զարգացման ու ռազմավարական ծրագրերի իրականացման ուղղությամբ:
- 30- Սահմանափակել օտար անունների օգտագործումը տնտեսական, գիտական, ուսումնական եւ այլ հաստատությունների ցուցատախտակի վրա: Ժողովրդին եւ մանավանդ ձեռնարկատերերին քաջալերել ու առաջնորդել դեպի ազգայինը, ստեղծել ու արտադրել Ազգային տնտեսության զարգացման հաշվին, եւ ընտրել ոսկեդենիկ հայկական բառեր, բառակապացություններ ու զուտ հայկական անվանումներ իրենց արտադրության ու ձեռնարկի համար:

- 31- Համաժողովրդական պայքար ծավալել (համապատասխան օրենքներով) օտարամուտ բացասական ազդեցությունների դեմ, որոնք հակասում են զուտ հայկական մշակույթին ու հայկական հասարակական-քաղաքական ենթակառուցյին: Եւ քաջալերել հայկական վարք ու բարքը, կենցաղակերպը, հոգեւոր ու աշխարհիկ մշակույթը եւ այլն:
- 32- Մրցանակաբաշխման նոր ծրագիր մշակել ու գործադրել, որով պիտի գնահատվեն այն անհատներն ու հիմնարկները, որոնք գերազանց ծառայություն կը մատուցեն հայկական մշակութային, գիտական, արդյունաբերական, տնտեսական եւ մանավանդ գինվորական ասպարեզներում: Այդ իրադարձությունը վերաբերում է ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում ապրող հայերին ապա օտարազգիներին: Հարկ է վերացնել թայֆայական, խմբակցային, կուսակցական մոտեցումները ազգային հարցերի բնագավառից:
- 33- Սփյուռքի նախարարության հովանավորությամբ եւ ՀՀ եւ Սփյուռքի հասարակական կազմակերպությունների ու բարերարների կողմից ֆինանսավորվող «Համահայկական հրատարակչական Մարմին»- օգնելու հայրենի եւ սփյուռքահայ գրողների, բանաստեղծների, արվեստագետների ու հետազոտողների գործերի հրատարակմանը (տպագիր, թվային, եւ այլն):
- 34- ՀՀ-ում ապրող ազգային փոքրամասնություններին հնարավորություն տալ իրենց արտերկրի հայրենակիցներին փոխադրել Հայաստան, այդ շարքում՝ Եզդիներին, Ասորիներին, Չազաներին եւ այլն:
- 35- Ծրագիր Ք:
- 36- Այլ ծրագրեր:

Բ-2- Արտաքին քաղաքականություն

1. Պարզաբանել Հայկական Հարցի վերաբերյալ օտար պետությունների քողազերծված քաղաքականությունը մանավանդ 17-րդ դարից հետո մինչ այժմ, որի արդյունքում կճանաչվեն մեր ազգի ու պետության իրական բարեկամներն ու թշնամիները, եւ այդ երկու սահմանումի միջեւ ընկնող մյուսները:
2. Սահմանափակել դիվանագիտական եւ այլ հարաբերությունները թշնամի եւ ոչ-բարեկամ պետությունների հետ, եւ զարգացնել նյունը բարեկամ երկրների հետ:
3. Ըստ հին եւ ժամանակակից պատմության փաստերի ու ընդհանուր ընթացքի, ԱՄՆ, Մեծն Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան չեն հանդիսանում Հայոց բարեկամներ
4. Իսկ ըստ պատմական փաստերի, Հայ ժողովրդի բարեկամներ կարող են համարվել Ռուսաստանը, Պարսկաստանը, Չինաստանը, Ճապոնիան, Իտալիան, Հունաստանը, Կանադան, Հոլանդիան, Դանիան, Շվեդիան, Հնդկաստանը, Կորիան, որոշ Արաբական եւ Լատինամերիկյան երկրներ:
5. Ստեղծել Միջազգային իրավունքով զբաղվող իրավաբանների ու դիվանագետների հանձնաժողով, ՀՀ ԱԳ նախարարությունում:
6. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դատի տա Թուրքիայի ու Գերմանիայի պետություններին, որպես Հայկական Յեղասպանության պատասխանատուների:
7. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դիմի միջազգային դատական ատյաններ, այդ թվում՝ Հաագայի դատարան եւ դատի տա Թուրքիայի պետությանը, Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայերի նյութական ու մշակութային ժառանգության ոչնչացման կապակցությամբ, պահանջելով Հայ ժողովրդից խլված հողերն ու հողեւոր ժառանգությունն ու ֆինանսական փոխհատուցումը, վկայակոչելով՝
 -Մերի պայմանագիրը՝ 10 օգոստոսի, 1920 թ.,
 -ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը՝
 22 նոյեմբեր 1920 թ.,

- Կիլիկիայի Անկախության Հռչակագիրը՝ 4 օգոստոս 1920 թ.,
 -ՄԱԿ-ի մարդու իրավունքի հռչակագիրը,
 -հարակից այլ պայմանագրեր եւ իրավական փաստաթղթեր:
8. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դիմի ՄԱԿ-ի Մարդու իրավունքի հանձնաժողովին, վկայակոչելով Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիրը, պահանջելով Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային եւ կրոնական ինքնության եւ քաղաքացիական ազատ կամքի դրսեւորումը:
 9. Իրավա-դիվանագիտական հանձնաժողովը պիտի պաշտոնապես դիմի միջազգային դատական ատյաններ, այդ թվում՝ Հաագայի դատարան եւ դատի տա Ազրբեջանի պետությանը, հայերի դեմ ցեղասպանության գործադրելու մեղադրանքով, 1918-ից մինչեւ 1988, ապա նրա ռազմական գործողությունները հայ բնակչության դեմ:
 10. Արցախի հարցի միջազգային լուծում գտնելու համար, Իրավա-դիվանագիտական հանձնախումբը հարկ է դիմի միջազգային դատական ատյաններ, այդ թվում՝ Հաագայի դատարան, չեղյալ հայտարարի Խորհրդային Միության կուսակցական շրջանակների կողմից պարտադրված որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Ազրբեջանի Հանրապետության կազմի մեջ մտցնելու կապակցությամբ:
 11. ՀՀ Արտգործնախարարությունը պիտի պաշտոնապես չեղյալ հայտարարի Ալեքսանդրապոլի եւ Կարսի դաշնագրերը, եւ դիմի միջազգային դատական ատյաններ ու ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին եւ Անվտանգության խորհրդին, պահանջելով Հայ ժողովրդից խլված իրավունքների վերականգնումը:
 12. Ստեղծել Դիվանագիտական Քննիչ Հանձնաժողով, Հանրապետության Բարձրագույն Անվտանգության Խորհրդին կից, որը պիտի մանրամասնորեն քննի եւ հետեւի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների եւ դեսպանների, նաեւ կառավարության բոլոր անդամների գործունեությանը: Սահմանել խիստ պատժամիջոցներ օրինազանցությունների դեմ:
 13. ՀՀ ԱՆ-ում անցկացնել դիվանագիտական, քաղաքական, տնտեսական, հասարակական եւ մշակութային հարցերի գիտական եւ գործնական թարմացման սեմինարներ:

14. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները հարկ է կազմեն տվյալ երկրի հնարավորությունների եւ ՀՀ-ի հետ համագործակցության ամսական թարմացվող զեկուցագրեր, որոնք պիտի մտցվեն ՀՀ-ում ստեղծվող դիվանագիտական էլեկտրոնային համակարգի մեջ, որպես աղբյուր օտար երկրների հետ համագործակցության եզրերի կազմակերպման եւ ծրագրավորման նպատակով:
15. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները հարկ է կազմեն տվյալ երկրում հայկական համայնքների հնարավորությունների եւ կարիքների ամսական թարմացվող զեկուցագրեր, որոնք պիտի մտցվեն ՀՀ Սփյուռքի նախարարությունում ստեղծվող տեղեկատվական էլեկտրոնային համակարգի մեջ, որպես աղբյուր օտար երկրներում ապրող սփյուռքահայության հետ համագործակցության եզրերի կազմակերպման եւ ծրագրավորման նպատակով:
16. Մշակել հիմնական ռազմավարություն Արեւելյան Հարցին վերաբերող Արեւելյան գործընկերների հետ համագործակցության ուղղությամբ: Ի նկատի ունենալով պատմա-քաղաքական ու դիվանագիտական դինամիկան, թարմացնել այդ ռազմավարությունը՝ հանուն Հայ ժողովրդի գերագույն շահերի: Այս պահին հարկ է ռազմավարական գործունյա պայմանագրեր ունենալ Ռուսաստանի, Իրանի, Չինաստանի, Հունաստանի, Կիպրոսի, Սիրիայի եւ Հնդկաստանի հետ:
17. ՀՀ դիվանագիտական հարաբերությունների մակարդակը հարմարացնել երրկու երկրների համագործակցության պոտենցիալի ու ապագայի հետ, օպտիմալ գործունեություն եւ ֆինանսավորում ծավալելու ուղղությամբ, նվազեցնելով ծախսերը ըստ հնարավորին:
18. Երբ ՀՀ-ում կստեղծվի Համահայկական Տեղեկատվական Ընդհանուր Բազա, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները հարկ է համագործակցեն նրա թարմացմանը, ի մասնավորի միացնող օղակներ կազմել մի կողմից Սփյուռքահայության ու միջազգային հասարակական-մշակութային կազմակերպությունների եւ մյուս կողմից ՀՀ-ում օժանդակության ցանկացող անհատների, համայնքների ու կազմակերպությունների միջեւ:

19. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին առընթեր ստեղծել գրոսաշրջիկային գրասենյակ, որը պիտի պրոպագանդի ու հրանավորություններ տրամադրի արտերկրի մասնավոր ընկերություններին, ՀՀ-ում եւ Արցախում տուրիստական շրջագայություններ կազմակերպել:
20. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին առընթեր ստեղծել Առեւտրա-տնտեսական զարգացման գրասենյակ, որը պիտի պրոպագանդի ու հնարավորություններ տրամադրի արտերկրի մասնավոր ընկերություններին, ՀՀ-ում եւ Արցախում տնտեսական ծրագրեր կազմակերպել:
21. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները ուսումնասիրեն տվյալ երկրի հասարակական-տնտեսական ու մշակութային զարգացման ընթացքի հարմարավետ դասերը եւ փոխանցել այն Հայրենի միջավայրին, երկրի զանգացման ուղղությամբ, եւ հարկավորության պահին համագործակցել տվյալ երկրի հետ Հայաստանում զարգացնել այդպիսի ծրագրեր:
22. Այլ ծրագրեր:

բ) Հայաստանից անջատված հայկական տարածքների վրա ապրող հայեր

1. Ստեղծել տեղական հասարակական-մշակութային եւ համայնքային կազմակերպություններ:
2. Միջոցներ ձեռք առնել պապենական ժառանգությունների վերականգնման համար, տեղական հայամետ կազմակերպությունների ու իշխանությունների համագործակցությամբ:
3. Օգտագործել համացանցային եւ ՀՀ-ից սփռվող ռադիո-հեռուստացուցային ծրագրերը, վերագտնելով իրենց ազգային ու մշակութային ինքնությունը:
4. Մասնակցել զբոսաշրջիկային ծրագրերի ու հաճախակի այցելել թե՛ Հայաստան եւ թե՛ Սփյուռքի հայկական համայնքներ, ծանոթանալ իրենց հայրենակիցների հետ, մշտական կապեր հաստատել նրանց հետ:
5. Օգտագործելով ԱՄՆ-ի կոնգրեսի որոշումը, ըստ որի Թուրքական պետությունը պիտի իրենց տերերին վերադարձնի մշակութային ժառանգությունը (օրինակ եկեղեցիներ) եւ միջազգային մարդու իրավունքի զանազան կազմակերպությունների հնարավորությունները՝ տեր կանգնի իր պապերի ստեղծած արժեքներին:
6. Հարաբերություն ստեղծել Սփյուռքի հայկական համայնքների եւ մարդասիրական ու բարեգործական կազմակերպությունների հետ, եւ հայցել նրանց համագործակցությունը իրենց մշակութային ու հոգեւոր արժեքների վերականգնման ուղղությամբ:
7. Երիտասարդների մասնակցությունը Սփյուռքի նախարարության կողմից ծրագրվող ձեռնարկներին, որը առիթ կստեղծի նրանց՝ ծանոթանալու թե՛ ՀՀ եւ Արցախի հետ եւ թե՛ դրանց միջոցով շփման մեջ կմտնի Սփյուռքահայ մյուս համայնքների հետ:
8. Երիտասարդներին ուղարկել Հայաստանի համալսարաններ անվճար ուսումը շարունակելու համար:
9. Ակտիվորեն մասնակցել տեղական հասարակական-քաղաքական եւ հասարակական-մշակութային

- գործողություններին, օրինակ գյուղական, քաղաքային, նահանգային ընտրություններին:
10. Գիտակից ակտիվիստները հարկ է հետազոտեն իրենց շրջանները, մանավանդ գտնեն իրենց հայրենակից հայորդիներին եւ օգնեն նրանց վերականգնելու իրենց ազգային ինքնությունը, սակայն խուսափեն հակապետական արկածախնդրական գործունեություններից:
 11. Ուսյալ անհատների ու ակտիվիստների համագործակցությամբ հարկ է ստեղծել հայկական դպրոցներ, դասընթացներ զանազան վայրերում եւ կամավորական կարգով հայրենի լուսավորչական գործունեություն ծավալել հայաբնակ (ծածուկ հայեր) շրջաններում:
 12. Տեղական հայ ակտիվիստները հարկ է ստեղծեն տեղական հայկական (հայատառ թե՛ լատինատառ) մամուլ, համացանցային համայնքային միջոցներ, օրինակ Ֆեյսբուքյան էջեր եւ այլն:
 13. Սերտ կապեր հաստատել Կ. Պոլսի հայության հետ, եւ իրականացնել միասնական մշակութային ու հասարակական ծրագրեր:
 14. Բարիդրացիական հարաբերություններ ամրապնդել տեղական մյուս ժողովուրդների հետ: Ի նակտի ունենալ, որ Արեւմտյան Հայաստանի ու արեւմտահայության ճակատագիրը շաղկապված է նաեւ տեղական Քուրդ ժողովրդի ապագայի հետ:
 15. Արեւմտյան Հայաստանում ապրող հայերի ազգային նորագույն զարթոնքի շնորհիվ է միայն հնարավոր կերտել նոր ապագա:
 16. Այլ ծրագրեր:

գ) Հայկական Սփյուռք

1. Սփյուռքահայության ամենագլխավոր ազգային պարտքն է «հայապահպանումը»:
2. «Ազգ»-ը միայն իր հայրենիքով եւ իր հայրենի հողի վրա ապրելով է որ կարող է կերտել իր ազգային ապագան:
3. Ազգը առանց մայրենի լեզվի ու ազգային ժառանգության ու հայրենի հողի չի կարող գոյություն ունենալ:
4. Պահպանել հայոց դպրոցն ու եկեղեցին:
5. Պայքարել աղանդավորության դեմ:
6. Ս. Էջմիածինն է միայն հայոց հոգեւոր կենտրոնը, ուստի հարկավոր է համախմբվել նրա շուրջ, եւ դառնալ մեկ հոգեւոր բռունցք:
7. Միացնել բոլոր սփյուռքիայ եկեղեցական թեմերը Հայրենի Ս. Էջմիածին:
8. Հայկական դպրոցնելում օգտագործել հայրենի նոր ուղղագրությունը, որը իր դյուրությունների շնորհիվ, կը օգնի մանավանդ մատաղ սերունդին սովորել մայրենի լեզուն առանց ուղղագրական խոչընդոտների:
9. Համագործակցել ՀՀ Սփյուռքի նախարարության հետ, տարեկան կանոնավոր մշակութային եւ վերապատրաստման օրեր անցկացնել ՀՀ-ում եւ Արցախում:
10. Դադարեցնել կազմակերպչական-կուսակցական նոր կենտրոնների զարգացումը, եւ հատկացնել առկա ֆինասական միջոցները Հայրենիքում մշակութային, հասարակական ու տնտեսական ծրագրերի իրականացմանը:
11. Օգտագործելով Համահայկական Տեղեկատվական Ընդհանուր Բազայի տվայյները, հովանավերել Հայրենիքում կարիքներ ունեցող ընտանիքին կամ անհատին մանավանդ մանուկներին, յուրաքանչյուր սփյուռքահայ ընտանիքի կողմից :
12. Կազմակերպել Հայրենիքի հետ զրոսիկաշրջության ծրագրեր, Հայրենիք տանել թե հայերի եւ թե օտարերկրացիների:
13. Կազմակերպել Հայրենիքի հետ տնտեսական ծրագրեր, Հայրենիք տանել թե հայերի եւ թե օտարերկրացիների ֆինասական կարողությունները:
14. Հրատարակել Հայ ժողովրդի մասին տեղեկատվական, պատմական, մշակութային ու տուրիստական գրքեր ու մամուլ

- հայերեն, անգլերեն եւ տեղական լեզուներով, որոնց շնորհիվ թե սփյուռքահայությունը եւ թե մյուս ժողովուրդները կձանոթանան Հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հետ:
15. Կազմակերպել Համահայկական Հեռակա դասընթացներ դպրոցական, մասնագիտական եւ համալսարանական տարբեր մակարդակներով, Հայրենի եւ միջազգային համարժեք գնահատականով:
 16. Վերացնել հին կուսակցական մոտեցումները, դասեր վերցնել անցյալի սխալներից, վերանայել կամ նորովին մշակել կուսակցական ու կազմակերպչական ծրագրերը:
 17. Վերջ տալ հայասպանությանը, թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեւոր ու գաղափարական առումով:
 18. Համագործակցել հայրենադարձության հայրենի ծրագրերին:
 19. Համագործակցել Հայրենի Իրավա-դիվանագիտական հանձնաժողովի հետ, միջազգային դատարաններում Թուրքիայի ու Գերմանիայի դեմ դատի ընթացքին:
 20. Արեւելյան Հարցի տեր Արեւմտյան երկրների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչման համար չվատնել ժողովրդական ֆինասական ու պատմական առիթները, քանզի վերջիններս ելնելով իրենց իմպերիալիստական շահերից երբեք չեն ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, եւ անհավանական ճանաչման դեպքում, երբեք գործնական քայլեր չեն վերցնելու հայոց իրավունքների վերականգնման ու փոխհատուցման ուղղությամբ: Ուստի ավելի ազգօգուտ կլինի եթե այդ ֆինանսական հնարավորությունները հատկացվեն հայրենիքում իրականացվող ծրագրերին:
 21. Հայերի ցեղասպանության դատապարտման եւ հատուցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները պիտի կատարվեն միջազգային դատական աստիճաններում, այդ թվում՝ Հաագայի դատարանում:
 22. Կիրառել իրավական ուղղություն, որը ներառում է Հայոց պատմամշակութային եւ քաղաքակրթական արժեքների պաշտպանությունը ՄԱԿ-ի եւ Եվրոպական Մարդու իրավունքների դատարանում եւ համապատասխան այլ աստիճաններում:
 23. Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ ինքնագիտակցության բարձրացման խելացի ու ոչ-արկածախնդրական ծրագրերի իրականացում:

24. Մշտական մշակութային ու հոգեւոր եւ ազգային շփումներ կազմակերպել Արեւմտյան Հայաստանի հայերի հետ:
25. Մշտական զբոսաշրջիկային այցելություններ կատրել Արեւմտյան հայաստան, ՀՀ եւ Արցախ:
26. Նոր եւ մատաղ սերնդին քաջալերել ամրացնեն իրենց հայերենի գիտությունն ու միմյանց հետ խոսել միայն մայրենի՝ հայերեն լեզվով:
27. Քաջալերել համացանցում օգտագործել հայերեն լեզուն հայերեն տառերով:
28. Ծխական տուրքը դարձնել Ազգային կանոնավոր տուրք, Համահայկական Բանկի միջոցով:
29. Տեղական ու շրջանային մակարդակով կազմակերպել տելետոն եւ նվիրատվական ձեռնարկներ, հայրենի պատասխանատու կազմակերպությունների հետ համագործակցությամբ եւ համադրությամբ, ի շահ Հայոց Չինված ուժերի հզորացման, տնտեսական ու արդյունաբերական զարգացման ծրագրերի:
30. Սփյուռքահայ գիտնականների հաճախակի այցելություններ Հայրենիք, շփումներ նրանց ու հայրենի գիտնականների միջեւ, համագումարների ու հանդիպումների ծրագրում եւ գործադրում թե ֆիզիկապես եւ թե հեռակա համացանցային միջոցների օգնությամբ:
31. Այլ ծրագրեր:

Վ Ե Ր Ջ

The Armenian Question Manifesto

By
Edic Baghdasarian
(Ed. Germanic)

Toronto-Canada



Edic Baghdasarian

2014



Էդիկ Բաղդասարյան

www.Edic-Baghdasarian.com

ISBN : 978-1-927860-27-4